

# Իրավագրան մշակույթ

Չկա Հասարակություն  
անտեղ իրավունքի  
Ubi societas ibi jus

շ ա ք ա ք  
թիվ 17 (37)  
2008 թ. օգոստոսի 30

## ՄԻՔԵՆԵ ՄԵՐ ԱԶԳԱՆՈՒՆՆԵՐԻ ԱՍՈՑԸ

### ԱԶԳԱՆՈՒՆԸ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԱՆԱՂԱՐՏ ՎԿԱ

...Խորհրդային ժամանակներում ձևավորված «ավանդույթ» կար. կինոթատրոնում ոչ հայկական ցանկացած (ռուսական, ուկրաինական, վրացական, այլ արտադրության) շարժանկար դիտելիս, ամենասկզբում, երբ ներկայացվում էր շարժանկարի ստեղծագործական կազմը, և պատահին հայտնվում էր որևէ հայ ազգանուն, հայ դահլիճն անհրահանգ, բայց բուն ու համերաշխ ծափահարում էր: Հայոց ազգանվան -յանը այդպես մեզ համակում էր ոգևորությամբ, լցնում ազգային արժանապատվության զգացումով: Մեզ հայ պահելու շատ արժեքների թվում՝ լեզու, հավատ, գիր, անշուշտ իր նշանակալից տեղն է ունեցել նաև -յանը: Բայց եթե հազարամյակների նվիրումով նա ծառայել է մեզ, մենք՝ նույն -յանի կրողներս, արդյո՞ք նրա հանդեպ եղանք երախտապարտ և հոգածու՝ անաղարտ ու հայեցի պահելով հենց իրեն՝ մեզ այդպես պահողին: Ավաղ, չեղանք: Պատմության մի նեղ ուղիանում մեր հնօրյա -յանը մենք կապեցինք քոչվոր ու անհայրենիք ինչ-որ քեշիչների, դասաբողիկների, դամրջիների պոչից, և -յանից ու հենց մեզանից հայությունը մի քիչ պակասեց: Եվ հիմա ծածուկ մի անհարմարություն ենք զգում, երբ Արմեն անվան կողքին հնչում է Ջիգարխանյան, Առնոյի կողքին՝ Բաբաջանյան, Արամի կողքին՝ Ղանալանյան, Եղիայի կողքին՝ Տեմիրճիպաշյան, Հովհաննեսի կողքին՝ Չեքիջյան, Գրիգորի կողքին՝ Գյուրգաղյան, Տիգրանի կողքին՝ Խզմալյան... Անհարմար ենք զգում, որովհետև մտքի հեռավոր ծայրով պատկերացնում ենք. այդ ազգանունը լսում է նաև օտարը, լսում ու գուցե չարախնդում է ուրիշի բառ-ունեցվածքը սեփականելու մեր անմիտ սովորույթի վրա: Մինչդեռ փորձեք թեկուզ մեկ հայերեն բառ գտնել նույն այդ օտարի ազգանուններում. դժվար գտնեք՝ չեք գտնի: Հայը (երբեմն՝ տոհմանունը կրողն ինքը) սովորաբար չգիտի էլ օտար բառ-արմատի իմաստը, մինչդեռ անգրագետ ամեն մի թուրք գիտի, որ «ղանալանը» պատյանագործն է, «չեքիջը»՝ կշռավարը, «խզմալը»՝ իրեն չտիրապետող՝ անզուսպը: Մենք նույնիսկ օտար վիրավորական բառն ենք դարձրել տոհմանուն, որ թուրքաթարի դեմ մարտնչած մեր զենեարվը կոչվի *Դալիբալթյան* (կեղեքիչ): Մենք ինքնադավ եղանք այնքան, որ 2000 տարի քրիստոնյա մեր ցեղում *ավալերոյաններն ու թարիվերոյանները ավելի շատ են, քան աստվածատրյաններն ու տիրատուրյանները*: Եվ զարմանալի անզգույշ եղանք՝ թույլ տալով, որ լուսեղեն մեր *մանուկին* պղծի թուրքի երիցս սև *դարա-ն* (Ղարա - Կարա - Գարամանուկյան). թույլ տվեցինք նույնիսկ, որ մեր *մանուկի* հետ, ինչ անհեթեթություն, «մերվի» քոչվորի... *օղլին* (Մանուկօղլյան): Ինքնադավության ուղին բռնածներիս համար հետո կարելի դարձավ նույնիսկ ավելի սրբապիղծ լինել՝ թույլ տալով, որ օտար *օղլին* հանգիստ բազմի նաև հայոց... խաչի ու խաչիկի կողքին:

Ազգանունը, ինչպես բառն է հուշում, կոչված է ոչ միայն տոհմանուն նշելու, այլև ցույց տալու կրողի ազգությունը: Այդ իմաստով յուրաքանչյուր ազգանուն նաև ազգա-

ճանաչման գործառույթ ունի. երբ կորսվում է այդ գործառույթը, դյուրին է դառնում նաև որևէ անձի ազգային պատկանելության շփոթը: *Հովհաննես Այվազովսկուն* աշխարհում շատ քչերն են որպես հայ ընկալում. ազգանունը, որքան էլ տարօրինակ է, նրան իր ազգությունից հեռացնում է՝ տանել-առնելով լեհի, հրեայի, ռուսի՝ այլազգու, սակայն ոչ հայի հետ: Եվ այս իմաստով Հ. Այվազովսկին որպես *հայ* մշակույթի երևույթ *աշխարհի աչքում* կարծես կորսված է: Ունենք տաղանդավոր երգահան *Միքայել Թարիվերդին*, բայց փորձիր օտարին համոզել, որ նա հայ է. ոչ *թարի-ն* է դա հուշում, ոչ *վերդի-ն*, ոչ բառավերջի *և-ը*: Սերգեյ Փարաջանովի հայ լինելը չի երևում ոչ անունից, ոչ ազգանունից: Եվ խոստովանենք, որ հենց հայերիս ընկալումներում Հ. Այվազովսկին, Ս. Թարիվերդինը, Ս. Փարաջանովը մի քիչ... հայ չեն: Իսկ այդպիսի ընկալմանը «նպաստել է» հենց օտար ազգանունը:

Ընդհանրապես անունների խնդրում հայերս անզգույշ լինելու չափ օտարասեր ենք, այդ պատճառով էլ հայոց անունարանը լի է օտար ծագման բառերով ու արմատներով: Անձնանունների առումով, մասնավորապես, եթե մենք ընդգծված կերպով սլավոնամետ-արևմտամետ ենք, ապա ակնհայտ է մեր թուրքամիտությունը ազգանունների խնդրում: Առաջինը վտանգավոր չէ այնքանով, որքանով անունը մեկ սերնդի ընթացքում փոխվում է, հետևաբար կարելի է արագ ազատվել օտար անունից: Խնդիրն այլ է ազգանունների պարագայում, որոնք սերնդեսերունդ անփոփոխ ժառանգվում են (իսկ ավանդապահ հայը ամեն ինչ անում է ազգանվանն իր հավատարմությունը պահելու համար), և այդպես հավերժության ճամփին են հայտնվում ամեն տեսակ *աղաբայաններն ու բարուխանյանները, քեշիչյաններն* ու (սրա «ժառանգ») *քեշիչօղլյանները, համամջաններն ու թամամջանները*: Եվ այդպես հայը անմահության «ուղեգիր» է տալիս իր իսկ պատմության այն նեղ ուղի-րանին, ուր իր ճորտական կացությունը, իր իրավագուրկ վիճակն է արձանագրվել: Արձանագրվել, ավելի ստույգ՝ խարանվել... ազգանվամբ: Բայց արժե՞, որ մենք շարունակենք տոհմակոչվել *Նավայան (ապուշ), Գավուկյան (խաբեբա), Համալմազյան (իրավագուրկ), Ղարաջյան (բամբասող), Թուլունբաջյան (անկիրթ), Գուրաթյան (անտաշ)*, ինչ է թե կեղծ-երևութական հավատարմություն ենք պահպանում նախնայց տոհմանուններին, որ երբեմն ոսոխի խարանած ծաղրանուն է ընդամենը:

Մինչդեռ իր *անխաթար կերպի* մեզ ազգանունը մարդու մասին հզոր ծագումնաբանական տեղեկույթ է ամփոփում:

*Վիլյամ Սարոյանը*՝ անվամբ, ծննդյամբ, կրթությամբ ամերիկացի, իր գրականությունը՝ անգլերեն, բայց մեր ընկալումներում զտարյուն հայ է, քանզի, այլ հուշումներից առավել, անխաբորեն այդ է հուշում *ազգանունը*՝ անխաթար հայերեն կազմությամբ: *Նիկիտա Սիմոնյանը*՝ անվամբ, ծննդյամբ, լեզվով, լեզվամտածողությամբ բոլորովին «օտար», մեր ընկալումներում հայ է *ազգանվամբ*:

## ԶԱՅՆ ՄԵՏՈՍ

ԱՐԱՄ ՀԱԿՈՐԻ ԳԱՐԱՄԱՆՈՒԿՅԱՆ  
Սիրիական բանակի հրամանատար, գեներալ-լեյտենանտ, իրավունքի դոկտոր

«Կը մերժեմ ամեն պաշտոն ու պատիւ, որոնց գիւնը «եան»-ի ուրացումը պիտի ըլլայ»

## ԱՅՍ ՀԱՄԱՐՈՒՄ

Իրավունքը և մարդու իրավունքներն աշխարհում .....	էջ 2
Զանիբեկ Ղուկասյան. «Սրտաբաց զրույց երիտասարդության հետ» .....	էջ 3
Մարդու իրավունքների և կենսաբժշկության համաձայնագիր .....	էջ 4
Նոր օրերներ և որոշումներ .....	էջ 4
Ինգա Զարաֆյան. «Սևանը հեռանում է մեզնից» .....	էջ 5
Հին աշխարհի իմաստասիրությունից .....	էջ 6
Մշակութային լրաբաղ .....	էջ 6
Խորեն Մանուկյան. «Մի զարմանալի սքանչելիքի պատմություն» .....	էջ 7
Երևանում կկառուցվեն տասնյակ ստորգետնյա ավտոհանգրվաններ .....	էջ 8
Տեղեկույթ, ազդ, հայտարարություններ .....	էջ 8



# ԻՐԱՎՈՒՆՔԸ ԵՎ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ

## ՆԵՐՎԱՍՏԱՆ

### Գրաքննությունը Հնդկաստանում



«Լրագրողներ առանց սահմանների» կազմակերպությունը կոչ է արել Հնդկաստանի իշխանություններին անհապաղ դադարեցնել հնդկական այն օրենքների գործողությունը, որոնց գործադրմամբ Քաշմիրում գրաքննություն է իրականացվում:

Ոստիկանության աշխատակիցները ծեծի են ենթարկել 13 լրագրողների, ովքեր պարետային ժամը խախտելով աշխատանքի էին գնում: Տեղական հեռուստաընկերություններն ու մամուլը խիզախություն չունեն արժարժելու առկա խնդիրները:

Մի թղթակից «Լրագրողներ առանց սահմանների» կազմակերպությանը հայտնել է, որ 20 ստուգում է անցել աշխատավայր հասնելու ճանապարհին՝ ենթարկվելով նվաստացումների: Նա հարկադրված է եղել բազմիցս պատասխանել իր մասնագիտական գործունեությանը վերաբերող միևնույն հարցերին:

Լրագրողների մի խումբ այս ամենին արձագանքել է փողոցներում ցույցեր կազմակերպելով: Հնդիկ ոստիկանները բարձրախոսներով բնակչությանը հորդորել են դադարեցնել ցույցերն ու մնալ տանը:

### Միջուկային տեխնոլոգիաները կնպաստեն պարենային ճգնաժամի հաղթահարմանը



Վիեննայում ՄԱԿ-ի Պարենային և գյուղատնտեսական կազմակերպության և Ատոմային էներգիայի միջազգային գործակալության հովանու ներքո կազմակերպվել է քննարկում նվիրված աշխարհում պարենային ճգնաժամի հաղթահարման գործում միջուկային տեխնոլոգիաների դերին:

Մասնակիցներն ընդգծել են, որ գյուղատնտեսության մեջ կիրառվող միջուկային մեթոդները օգնում են միլիոնավոր մարդկանց բարձրացնել բերքատվությունը գյուղատնտեսության մեջ: Նրանք միաձայն հաստատել են, որ միջուկային տեխնոլոգիաները անմիջական ներդրում կունենան սովի և աղքատության խնդիրների լուծման հարցում: Միջուկային տեխնոլոգիաները բնակչության պարենային անվտանգության նպատակով կիրառվում են դեռևս 1964 թ.-ից:

ՄԱԿ-ի Պարենային և գյուղատնտեսական կազմակերպության փոխտնօրեն Ջիմ Բատլերը հայտարարել է դրա կարևորության մասին, որպեսզի հնարավոր լինի իրավիճակի կայունացումից հետո բարելավել սերմացու նյութերն ու բույսերը: Նշվել է, որ ատոմային էներգիան չի առնչվում մարդու 5 զգայարաններին. անհոտ և անշոշափելի է:

Ճառագայթահարման տեխնոլոգիայի շնորհիվ հնարավոր է բարձրացնել մթերքի անվտանգության մակարդակը միաժամանակ ոչնչացնելով այնպիսի բակտերիաներ, ինչպիսիք են աղիքային բացիլները՝ չթողնելով նաև ճառագայթման հետքեր:

Այգիների և բանջարանոցների բերքի մշակման համար կիրառվող իռադիացիայի տեխնոլոգիան նպաստավոր ազդեցություն է ունենում նաև շրջակա միջավայրի վրա:

### Օգոստոսի 30-ը բռնի անհետացումների զոհերի միջազգային օրն է

Աշխարհում տարեկան ավելի քան 10 հազար մարդ է առևանգվում: ՄԱԿ-ի փորձագետների խումբը, որն զբաղվում է այդ դեպքերի հետաքննությամբ, նշել է, որ առևանգումների դեպքեր արձանագրվում են բոլոր աշխարհամասերում: Նման հանցագործությունների զոհ են դառնում իրավապաշտպանները, հոգևոր առաջնորդները և

տարբեր էթնիկ հանրությունների պատկանող անձինք: Փորձագետները մտահոգություն են հայտնել հատկապես Չարում, Պակիստանում, Ֆիլիպիններում, Շրի Լանկայում և այլուր մարդկանց բռնի անհետացումների դեպքերի աճի առնչությամբ: Շատ դեպքերում անհետացումների մասին ոչ ոք նույնիսկ չի տեղեկանում:

Նախկինում մարդկանց բռնի անհետացումները, որպես կանոն, պայմանավորված էին պետական քաղաքականությամբ կամ կառավարող համակարգի գործունեությամբ: Մինչդեռ այսօր իրավիճակը փոխվել է բարդացել է: Մարդկանց անհետացումների դեպքերի ճնշող մասը պայմանավորված է ներքին հակամարտություններով:

Փորձագետների աշխատանքային խումբը անդամ երկրներին հորդորել է պայքարել այս ամոթալի երևույթի դեմ և վավերացնել *Բռնի անհետացումներից բոլոր անձանց պաշտպանելու մասին* միջազգային համաձայնագիրը ընդունված 2006 թ. Գլխավոր վեհաժողովի 61-րդ նստաշրջանի ընթացքում:

### Սահմանվել է աղքատության նոր շեմ՝ օրական մեկ դոլար 25 ցենտ



2005 թ. գնողունակության տվյալների հիման վրա ճշտվելով աշխարհի աղքատ բնակչության թիվը *Համաշխարհային բանկ* աղքատության նոր շեմ է սահմանել: Նախկինում աղքատներ էին համարվում նրանք, ովքեր գոյատևում են օրական 1 ԱՄՆ դոլարով, այժմ աղքատ են համարվելու նրանք, ում եկամուտները չեն գերազանցում 1 դոլար 25 ցենտը:

Համաշխարհային բանկի փորձագետները եզրակացրել են, որ 2005 թ. 1,4 մլրդ մարդ գոյատևել է 1,25 ԱՄՆ դոլարից պակաս գումարով:

Օրինակ՝ Սահարայի հարավային շրջանի աֆրիկյան երկրներում 1,25 ԱՄՆ դոլարից պակաս գումարով գոյատևած մարդկանց թիվը 2005 թ. կազմել է 50%: Պա 1981 թ. նույն ցուցանիշն է: Բայց աղքատների իրական թիվը 200 միլիոնից (1981 թ.) հասել է 380-ի (2005 թ.): Եթե այս միտումը շարունակվի, ապա մինչև 2015 թ. աշխարհի ողջ աղքատ բնակչության 1/3-ը կենտրոնացած կլինի Աֆրիկայում:

Փորձագետները նշել են նաև Արևելյան Եվրոպայում և Կենտրոնական Ասիայում աղքատության ծավալների մասին: Նշված շրջանների համար աղքատության նվազագույն շեմի ցուցանիշը սահմանված է օրական 2 դոլար:

### Աղքատության հաղթահարման համընդհանուր քարոզարշավ



Աշխարհում միլիոնավոր համախոհներ սեպտեմբերի 1-ից միանում են «*Աղքատության հաղթահարման համընդհանուր քարոզարշավ*»-ին (ԱՀԳՔ)՝ 50 օր շարունակ ակտիվորեն աղքատության դեմ պայքարելու համար: Քարոզարշավի մասնակիցներն ավելի քան 100 երկրներում համերգներ, քննարկումներ, ֆուտբոլային մրցումներ և հավաքներ կկազմակերպեն:

Գործողությունները կշարունակվեն հոկտեմբերի 7-ին Պատշաճ աշխատանքի միջազգային օրը, Պարենի համաշխարհային օրը՝ հոկտեմբերի 16-ին և Պարտքերի գործողությունների շաբաթվա ընթացքում՝ հոկտեմբերի 13-19-ը: Քարոզարշավի զագաթնակետը կդառնա հոկտեմբերի 17-19-ը անցկացվող «Ելիր և գործիր» նշանաբանով համախմբումը:

2007 թ. 43.7 միլիոն մարդիկ ելան և աշխարհի ղեկավարներին ուղարկեցին ազդեցիկ կոչ՝ վերջ դնելու համընդհանուր աղքատությանը:

**ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՕՐԱՅՈՒՅՑ**

**Մեկպեմբերի 2-րդ երեքշաբթի օր - Խաղաղության օր**

**Մեկպեմբերի 8 - Գրագիրության միջազգային օր**

### Տարեկան 500 հազար մահ՝ հղիության և ծննդաբերության հետևանքով



Հղիության և ծննդաբերության հետևանքով յուրաքանչյուր րոպե աշխարհում մահանում է մեկ կին. տարեկան 500 հազար: Այս մասին հայտնում է *Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը* (ԱՀԿ), որի փորձագետներն անհանգստացած են, որ հազարամյակի զարգացման ութ նպատակներից մեկը՝ մայրական մահացության դեպքերի թվի կրճատումը, դեռևս անբավարար է:

2005 թ. աշխարհում մայրական մահացության դեպքերի թիվը հաջողվել է կրճատել ընդամենը 5%-ով: Ավելին աֆրիկյան երկրներում այդ թիվն աճել է: Չարագող երկրներում հարյուր անգամ ավելի շատ կանայք են մահանում հղիությունից, քան զարգացած երկրներում: Օրինակ՝ Աֆղանստանում հղիության և ծննդաբերության ընթացքում մահանում է յուրաքանչյուր 6-րդ կինը, ԱՄՆ-ում՝ 2500-րդը, Շվեդիայում՝ 29.800-րդը:

Ըստ վիճակագրության աշխարհում տարեկան ծննդաբերում է 136 մլն կին, որից 14 միլիոնը 14-19 տարեկան աղջնակներ են:

ԱՀԿ-ի փորձագետների կարծիքով՝ մայրական մահացության դեպքերի նվազեցման համար հարկ է բարձրացնել կանանց մատուցվող բուժօգնության մակարդակը:

## ԲՈՒՆԻՄ ԵՎ ՆԵՐՅԵԳՈՒԽՆԱ

### Պայքար ատելության դրդմամբ սպանությունների դեմ

ԵԱՀԿ-ի Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակը (ԺՀՄԻԳ) համաձայնագիր է ստորագրել Բոսնիայի և Հերցեգովինայի անվտանգության նախարարի հետ: Համաձայնագիրը նախատեսում է ոստիկանության աշխատակիցների համար դաշնաբանության կազմակերպել և օժանդակությունը ցուցաբերել ատելության հողի վրա կատարված հանցագործությունների դյուրին հայտնաբերմանը, դրանց դեմ պայքարին:

Ինչպես նշում է *Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի* առաջին փոխտնօրեն Տորալվ Նորդբոն, այս քայլով Բոսնիայի և Հերցեգովինայի կառավարությունը դրական օրինակ է ծառայում ԵԱՀԿ անդամ շատ երկրների համար:

### Օլիմպիական սխալները պետք է բացառվեն

Օլիմպիական խաղերի ավարտից հետո «*Միջազգային համաձայնագրում*» կազմակերպությունը հանդիմանել է Չինաստանի իշխանություններին խաղերի ընթացքում ակտիվիստներին և լրագրողներին հետապնդելու և պատիժների ենթարկելու առնչությամբ:

Կազմակերպությունը քննադատել է նաև *Միջազգային օլիմպիական կոմիտեին* (ՄՕԿ) մարդու իրավունքների զաղափարը ստվերելու համար:

«*Միջազգային համաձայնագրում*»-ը կոչ է անում ՄՕԿ-ին դասեր քաղել՝ մշակելով մարդու իրավունքների համապատասխան չափորոշիչներ օլիմպիական հետազգ գործընթացների և հյուրընկալ քաղաքների համար: «*Միջազգային համաձայնագրում*»-ը, սակայն, չի անտեսել նաև չինական իշխանությունների կողմից կատարված դրական քայլերը, այդ թվում՝ մի շարք միջազգային կայքերի արգելափակման վերացումը:

ԴԻՏԱՐԿՈՒՄ

«Մեծին չտողի ոտքը քարին կանգնի»... ասում է ժողովրդական ասացվածքը: Տասնամյակների իր հարուստ կենսափորձի բարի խորհուրդներն է հայ երիտասարդներին ուղղում մեր մշտական թղթակից Ջանիբեկ Դուկասյանը՝ երբեմնակի իր խոր մտահոգությունն արտահայտելով այն դեռահասների ապագայի առնչությամբ, ովքեր ցավալիորեն հեռանում են իրական արժեքներից, գրքից, կրթությունն արժևորելու հայավանդ գիտակցությունից:

Անշուշտ, այսօր քիչ չեն մաս այն երիտասարդները, ովքեր անմնացորդ մվիրված են հենց այդ արժեքներին և ամեն գնով պայքարում են ոչ միայն դրանց անխաթար պահպանման, այլև հետագա զարգացման, ընդլայնման համար: Ինչևէ, հեղինակի գրույցն իսկապես սրտաբաց, անկեղծ ու արդիական է:

Միտքի բարեկամ: Ես ուշիուշով հետևում եմ քեզ: Անկարող եմ անտեսել քեզ, քանզի դու ես իմ և մեր երկրի ապագան: Ուշիուշով հետևում եմ քեզ՝ լցվելով արժանապատվությամբ, քանզի դու ավելի զարգացած ես, քան, ասենք, 50-70 տարի առաջ քո հասակակիցներն էին: Եվ դա բնական է: Գիտատեխնիկական այն հեղաշրջումը, որը տեղի ունեցավ վերջին տասնամյակներում, չէր կարող իր ազդեցությունը չունենալ քեզ վրա: Այո, դու այսօր առավել բանիմաց ես, առավել տեղեկացված, բայց...

Չենց այդ «բայց»-ի մասին է, սիրելի բարեկամ, որ ցանկանում եմ սրտաբաց գրույցել քեզ հետ:

Քո մեջ տեսնում եմ տագնապեցնող մի բան՝ անտարբերություն, նպատակասլություն պակաս: Անցյալ դարի 50-ականների քո հասակակիցները, չունենալով քո հնարավորությունների չնչին մասն անգամ (կրելով նյութական դժվարություններ, ունենալով տեղեկատվական տեխնոլոգիաների հեռուստատեսության, համացանցի, ճյուղիսկ գրքերի պակաս)՝ քեզնից ավելի երագող (ոչ սին) ու նպատակասլաց էին, համար ու աշխատասեր: Անշուշտ, դու էլ նպատակներ ու ցանկություններ ունես, բայց երբևէ ինքդ քեզ հարց ես տվել, թե ինչ քայլեր ես ձեռնարկում դրանք կենսագործելու համար: Շատ քիչ բան կամ ոչինչ: Մինչդեռ հայեցողական ցանկություններն ապարդյուն են, հստակ քայլեր են անհրաժեշտ: Իսկ դու սպասում ես: Ու՛մ ես ապավինել: Ունենալ լինելու դեպքում «պապան կոզմի», իսկ եթե ապրուստի միջոցները չեն բավարարու՞մ: Ուրեմն՝ հույսդ քեզ վրա պիտի դնես: Մինչդեռ դու դարձրել ես իսկ իսկ կյանքի շարժիչ ուժը հանդիսացող կրթությանը, քանահարանքով ես վերաբերվում: Ավելին, երբեմն կաշառքով ես գնահատական կորզում, այսինքն՝ դրան ես ծախսում, որ անգրագետ մնաս, իսկ հայ մեծ լուսավորիչ Խ. Աբովյանը մեծ ջանքերով Դորպատ էր հասնում կրթություն ստանալու նպատակով: Քեզ համար առավել իրապրոֆիչ են փողոցը, հեռուստատեսությունը, համակարգչային

# ՄՐՏԱԲԱՅ ԶՐՈՒՅՑ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՆԵՏ

Ով խրատ է սիրում, նա իմաստություն է սիրում. ով ատում է հանդիմանությունը, նա անմիտ է: Առ. 12:1

խաղերը. գոնե դրանք որակյալ լինեին: Չեմ մոռացել շատ նշանավոր մարդկանց, ովքեր անցել են «կյանքի՝ դպրոցը», ավարտել «կյանքի՝ համալսարանը»: Այսօր կյանքի համալսարանն այնքան է աղավաղվել-աղճատվել, ավելին՝ ապականվել, որ վախեցնում եմ քեզ համար, սիրելի բարեկամ. այդ «կյանքի համալսարանից» քիչ լավ բան կարող ես տվորել՝ ընդամենը խաթարելով խոստումնալից ապագադ: Ուստի ահա իմ առաջին հորդորը. **Մի՛ գնա հեշտ ճանապարհով:** Չեշտ ճանապարհով ուր էլ հասնես, միևնույն է, հետագայում պիտի գա ուշացած զոջման պահը...

Հարկ է հենց սկզբից նպատակ դնել և անվարան ձեռնամուխ լինել դրա իրականացմանը՝ չեղկնջելով դժվարություններից, խոչընդոտներից: Բոլոր խոչընդոտները երկյուղում են համար, վճռական մարդու գործիքից, տեղի տալիս: Հիշե՛ք Հր. Աճառյանի, Լամբարուի, Պիեռ և, հատկապես, Մարի Կյուրիների կյանքի մանրամասները: Նրանց ոչինչ հեշտությամբ չի տրվել. ամեն ինչ ձեռք է բերվել համար, ծանր աշխատանքով: Բայց միշտ էլ մոռացվում է աշխատանքի ծանրությունը, երբ ավաճում ես նպատակով: Չկա ավելի մեծ երջանկություն, քան այն զգացողությունը, որ աշխատանքը պատվել է հաջողությամբ: Դա երանություն է:

**Մի՛ տարվիր ժամանակակից անգողիկ հաճույքներով.** սա իմ երկրորդ հորդորն է: Այսօր օրդ լավ անցկացնելու մտայնությամբ առաջնորդվելով՝ կարող ես կորցնել վաղվա հեռանկարը, ապագայում լավ ապրելու հնարավորությունը: Չետաքրքիր, իմաստալից

կենսաձևի հիմքերը պետք է դրվեն մանկության, պատանության տարիներին, իսկ երիտասարդության տարիները պետք է դառնան այդ հիմքերի ամրապնդման շրջանը: Իսկ ամուր բարոյական ու հոգևոր հիմքի վրա երջանիկ կյանք կառուցելն արդեն դուրսին է: **«Երջանկության կառուցիչ» շինարարությունն անվերջ, հարուճազ գործ է:**

Այստեղից բխում է իմ երրորդ հորդորը. **Մի՛ ծուլացիր:** Ծուլությունը, ըստ քրիստոնեական դավանաբանության, մեղք է, որը կարող է խորանալ և դառնալ բնավորություն, անբուժելի հիվանդություն: Իսկ դու ամբողջ գիրք, էլ չեմ ասում Սուրբ Գիրքը՝ Աստվածաշունչը, չես ընթերցում՝ նույնիսկ մոռանալով, թե ով է Հ. Թուոմանյանը: Երբ լսում ես Դեմիտրիյան ազգանունը, մտաբերում ես Ստեփանին (նրան տեսել ես հեռուստատեսությամբ), միջոցով մեք ունեցել ենք և ունենք Դեմիտրիյան Դեմիտրիյան: Քեզ անծանոթ է Ե. Չարենցի քնարերգությունը, ով այնքան գորովալից ու ջերմագին երգում էր քեզ ապագայի «զանգրահեր տղայի»՝ հույսեր կապելով քեզ հետ: Տեր կանգնիր, սիրելի բարեկամ, «զանգրահեր տղայի» քո կերպարին ու առաջնությունը:

**Մի՛ սաս, քե՛ ժամանակ չունես,** սա իմ չորրորդ հորդորն է: Ժամանակից ժամանակ խլիր և արա՛ այն, ինչ հարկավոր է անել այսօր, այնպես վաղն ուշ կլինի: Այսօր չարածո՞ր անդառնալիքներ կորած է, և այն երբեք ի գործ չես լինի շտկել:

**Սովորիր աշխատել:** Ահա իմ հաջորդ հորդորը: Բավական է միայն աշխատելը դարձնել սովորություն, և այդուհետ չես կարողանա



ապրել առանց դրա: Շատ քիչ դեռահասների զիտեն (հատկապես տղաների), ովքեր տանն օգնում են ծնողներին: Այդպես չի կարելի, սիրելի բարեկամ. յուրաքանչյուր մարդ ուժերի ներածին չափով պետք է ընտանիքի համար օգտակար աշխատանք կատարի, ոչ թե սպասի՝ երբ են սկսվելու վրա պատրաստի վիճակում իրեն մատուցելու ցանկալին: Առօրյայում աշխատասիրության շնորհիվ հնարավոր է ձեռք բերել ավելին, քան այն, ինչը սոսկ արհեստավարժության միջոցով է տրվում: Հարկ է աշխատանքին ընտելանալ մանկուց. հետո այն կարող է վերածվել տիպի ու անցանկալի պարտականության: Դիպուկ է նկատել Դ. Ի. Մենդելեևը. «Առանց բացառիկ լարված աշխատասիրության չկան ոչ տաղանդներ, ոչ հանճարներ»: Երկրորդը՝ նրան կասե՛ր՝ չկան մաս որակյալ, բարձրակարգ մասնագետներ՝ մանկավարժ թե բժիշկ, իրավաբան թե փականագործ և այլն: Այո, հաջողության, բարձր արդյունքի տանող ճանապարհն անցնում է տքնաջան աշխատանքի միջով:

**Կյանքում սովորիր նաև զանազան լավ ու վատը.** սա այսօր իմ վերջին հորդորն է: Այն, ինչ քեզ իրանցնում են հեռուստատեսությամբ, մանուկով, անգամ գրքերով, մի՛ ընդունիր անվերապահորեն: Այդպես եմ ասում, սիրելի բարեկամ, որովհետև մեր օրերում հեռուստատեսությամբ հիմնականում անբարոյ ու ցածրաճաշակ «աղբ» է ներկայացվում, իսկ գրքերը... Իր մտքի «գոհարները» տպագրում է նա, ով շատ դրան ունի: Այս առնչությամբ հետևիր ուսուցիչներին, ծնողներին, դասախոսներին խորհուրդներին ինչ կարդալ, ինչ դիտել:

Կարծում եմ ավագների փորձառությունից դու միայն կշահես: Այս մտերմիկ գրույցն էլ հենց այդ նպատակով գրի առա:

Ասելիքս շատ է, բայց այսքանն էլ բավական է, որ կողմնորոշվես:

Նոր ուսումնական տարին մեկնարկել է: Գիտելիքների ձեռք բերման, իմացության խորքերի բացահայտումների ճանապարհին քեզ նորանոր հաջողություններ են մաղթում, իմ սիրելի՛ երիտասարդ բարեկամ:

ՋԱՆԻԲԵԿ ԴՈՒԿԱՍՅԱՆ

## ՀԱՐԱՎԻՑ ՄԱՄՈՒԼԻՑ

**Խորագրի ներքո տպագրելու համար այս անգամ խմբագրությունն առանձնացրել է Խաչատուր Դադայանի «Ռուսահայ կապիտալը կփոխի Հայաստանի դեմքը» վերնագրով, «Ազգ» թերթի 2008 թ. օգոստոսի 23-ի համարում տպագրված հոդվածից որոշ հատվածներ:**

Սկսենք ՀՀ երեք նախագահների սփյուռքահայ կապիտալի ներգրավման վերաբերյալ մոտեցումների համեմատությունից: Առաջինն ստացավ սոցիալիստական վիթխարի տնտեսական ժառանգություն և իր խմբիչխանության անդամներին օրինեց խժեղու «կտակը»: Ընչաքաղցությունը, արծաթսիրությունը, մարդու ներսի բոլոր հոռիությունները ջրի երես էլան, և անբարոյականությունը դարձավ բարոյական մորթ: Ոգևորությունից, հայրենասիրական մղումներից դրդված սփյուռքահայ կապիտալիստները պարզապես կողոպտվեցին՝ «քցվեցին»: Իսկ ՀՀ-ի պաշտոնաթերթն իր էջերում սփյուռքահայերին անսպառնորեն անվանեց «կթան կով», մի արտահայտություն, որով XIX դարում թուրքերը բնորոշում էին հայ ունևորներին: «Մեծ սուգունի»՝ 1991-1996 թթ. զանգվածային արտագաղթի տարիներին, Հայաստանից հեռացածների թվում էին շուրջ 100 հոգի, ովքեր գեներալական տաղանի, աշխատասիրության, աչքաբացության շնորհիվ Ռուսաստանում հասան բացառիկ բիզնես-հաջողությունների և այսօր այդ երկրի տնտեսությունում ունեն նշանակալի դերակատարություն: Սա էր պատճառը, որ իրապարակավ դառն կատակ արեցի՝ առաջարկեցի, որ այդ մարդիկ, ի նշան երախտագիտության, Լ. Տեր-Պետրոսյանի հուշարձանը կանգնեցնեն Մոսկվայում:

Նախագահ Ռոբերտ Քոչարյանին վիճակված էր այլ առաքելություն, նա պատմության մեջ կմնա որպես երկիրը վիհի եզրից հետ քաշող ու վերականգնող: Նա ստիպված էր շարունակ իրավիճակային լուծումներ գտնել, բայց և տեսնում էր համակարգային փոփոխությունների անհրաժեշտությունը, ինչն իրագործելու ժամանակ գրեթե չունեցավ...

Ով ինչ թվեր ուզում է բերի, բայց ակնհայտ է, որ արևմտահայ կապիտալից ունեցած հույսերը չարդարացան: Այն հիմնականում եղավ բարեսիրական, բայց ոչ երկիրը տնտեսապես առաջ մղող գործոն (մի քանի բացառությամբ՝ Քրդը Քրդերոյան և ուրիշներ):

Կարծում եմ, այդ ակնհայտությունը տեսանելի էր նաև նախագահ Ռ. Քոչարյանին, որը «բնական» դաշնակից Ռուսաստանի հետ համակողմանի հարաբերությունները հասցրեց հնարավորինս բարձր մակարդակի, դրանով հանդերձ ստեղծելով հենք, որի վրա նոր շինություն կառուցելը վիճակված է նախագահ Ս. Սարգսյանին:

\*\*\*

Եվ ահա նախագահի թեկնածու Ս. Սարգսյանը նախընտրական քարոզարշավի ընթացքում քանիցս հայտարարում է իմ ծրագրի ողնաշարը՝ համայն հայության ողջ ներուժը հայտնաբերելու ու օգտագործելու է: Իսկ Արաբկիր համայնքի ընտրողների հետ հանդիպման ժամանակ շարունակում աշխարհում կա 100 մլրդ դոլարի հայկական կապիտալ, այնինչ մեք չենք կարողանում դրա 1%-ն իսկ ներգրավել Հայաստանի տնտեսության մեջ: Լավ էր ասում, բայց ինչպե՞ս պիտի աներ: Բանից պարզվում է՝ գիտեր:

**Խաչատուր Դադայան, «Ռուսահայ կապիտալը կփոխի Հայաստանի դեմքը» «Ազգ», 2008 թ. օգոստոսի 23**

## ՀԱՆՈՒՆ ԿԱՆԱԶ ԿԱՆԱԶՈՐԻ



**ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՆԱԽԱԶԵՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՐԻՏԱՍԱՐԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ**  
հասարակական կազմակերպություն

2008 թ. օգոստոսի 27-ին «ժողովրդավարական նախաձեռնությունների երիտասարդական կենտրոն» (ԺՆԵԿ) հասարակական կազմակերպությունը կազմակերպել էր մամուլի ասուլիս՝ նվիրված «Շահերի պաշտպանության քարոզարշավի համուն կանաչ Վանաձորի» ծրագրի մեկնարկին:

Մամուլի ասուլիսի նպատակն էր իրազեկել հասարակությանը ծրագրի ու շահերի պաշտպանության քարոզարշավի մեկնարկի մասին: Ծրագրի շրջանակներում ԺՆԵԿ ՀԿ-ն նպատակ ունի շահերի պաշտպանության քարոզարշավի կազմակերպման և համախոհների հետ համագործակցության շնորհիվ հասնել Վանաձոր համայնքի զարգացման եռամյա ծրագրում այնպիսի դրույթի ընդգրկմանը, որով ամրագրվում է Վանաձոր համայնքի վարչական տարածքում գտնվող բազմաձայն տնկիների նկատմամբ իրավունքների պետական գրանցումը՝ ապահովելով դրանց հիմնարար օրենսդրական պաշտպանությունը ապրիլի ժառահատումներից: Ծրագրի իրականացման անուղղակի նպատակն է պաշտպանել Վանաձոր համայնքի կանաչ գոտիները:

«Շահերի պաշտպանության քարոզարշավի համուն կանաչ Վանաձորի» ծրագրի ֆինանսավորվում է «ՀԿ կենտրոն» ԲՀԶԿ հյուսիսային մասնաճյուղի միջոցով, Զառնաբերկար ինթերնեշնլի «Քաղաքացիական շահերի պաշտպանության աջակցության ծրագրի» և ԱՄՆ ՄԶԳ կողմից:

# ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԿԵՆՍԱԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԶԱՅՆԱԳԻՐ

**Քիտիթիկայի և մարդու իրավունքների ոլորտին գրեթե անհրազեկ են հասարակության լայն շրջանները: Մինչդեռ այդ հարցերը կենսական կարևոր նշանակություն ունեն ինչպես յուրաքանչյուր անհատի, այնպես էլ ամբողջ հասարակության համար: Ստորև ներկայացնում ենք որոշ հատվածներ Մարդու իրավունքների և կենսաբժշկության համաձայնագրից:**

## Ընդհանուր դրույթներ

Համաձայնագրի կողմերը պարտավորվում են կենսաբանության և բժշկության ասպարեզում ունեցած նվաճումները կիրառելիս խստորեն պաշտպանել յուրաքանչյուր անհատի արժանապատվությունն ու ինքնությունը, երաշխավորել անձի անձեռնմխելիությունը և մարդկային բոլոր իրավունքները:

### Հոդված 2. Անձի գերակայությունը

Առանձին մարդու շահերն ու բարեկեցությունը գերակայում են հասարակության և զիտության առանձնահատուկ շահերի նկատմամբ:

Ցանկացած բժշկական միջամտություն, այդ թվում նաև հետազոտական նպատակներով, պետք է իրականացվի գործող մասնագիտական պահանջներին և չափանիշներին համապատասխան:

### Համաձայնություն

Բժշկական միջամտությունը կարող է իրականացվել միայն միջամտությանը ենթակա անձի համաձայնության դեպքում՝ նախապես նրան տեղեկացնելով նաև հնարավոր հետևանքների կամ վտանգի մասին: Անձն իրավասու է ցանկացած պահի հրաժարվել իր տված համաձայնությունից:

Ըստ համաձայնագրի՝ համաձայնություն տալու անկարող անձի նկատմամբ բժշկական միջամտություն կարող է իրականացվել՝ ելնելով տվյալ անձի շահերից: Իր համաձայնությունը տալու իրավասություն չունեցող անչափահասների (նաև՝ չափահասների) նկատմամբ բժշկական միջամտություն կարող է տեղի ունենալ նրանց օրինական ներկայացուցչի, իշխանության մարմինների, իրավասու պաշտոնական անձի կամ հաստատության համաձայնությամբ: Կախված անչափահասի հասունությունից ու տարիքից՝ հետզհետե ավելի շատ է հաշվի առնվում նրա կարծիքը:

Հոգեկան խանգարումներով տառապող անձը առանց իր համաձայնության կարող է ենթարկվել բժշկական միջամտության միայն այն դեպքում, եթե նրա կյանքին ու առողջությանը վտանգ է սպառնում:

### Հոդված 10. Անձնական կյանքը և իրազեկման իրավունքը

Յուրաքանչյուր մարդ իրավունք ունի ծանոթանալ իր առողջական վիճակը բնութագրող տեղեկություններին:

### Մարդու զեմունը

Մարդու զեմունում միջամտությունը, ուղղված նրա մոդիֆիկացիային, կարող

է իրականացվել միայն կանխարգելիչ, թերապևտիկ կամ ախտորոշիչ նպատակներով և միայն այն պայմանով, որ նմանատիպ միջամտությունը ուղղված չլինի տվյալ անձի սերունդների զեմունի փոփոխությանը:

Չի թույլատրվում օգտագործել երեխայի ծննդյան օժանդակ բժշկական տեխնոլոգիաներ ապագա երեխայի սեռի ընտրության նպատակով, բացառությամբ այն դեպքերի, երբ նմանօրինակ միջամտությունը կանխում է ապագա երեխայի ժառանգական հիվանդությունը՝ կախված նրա սեռից:

### Գիտական հետազոտություններ

Կենսաբանության և բժշկության ոլորտում գիտական հետազոտությունները պետք է իրականացվեն ազատ՝ պայմանով, որ դրանք պահպանեն սույն համաձայնագրի դրույթները, ինչպես նաև մարդու իրավունքների պաշտպանությունն ապահովող այլ իրավաբանական նորմեր:

### Կենդանի դոնորից օրգաններ և հյուսվածքներ վերցնելը՝ պատվաստումների նպատակով

Փոխպատվաստման նպատակով կենդանի դոնորից օրգաններ և հյուսվածքներ վերցնելը կարելի է բացառա-

պես այն դեպքում, երբ տվյալ հյուսվածքը կամ օրգանն անհնար է վերցնել դիակից, և այլընտրանքային արդյունավետ բուժումներն անհնար են: Սրա համար պետք է առկա լինի հստակ շարադրված գրավոր կամ համապատասխան պաշտոնական օրգանների ներկայությամբ տրված համաձայնություն:

### Մարդու մարմնի մասերի վաճառքը և դրանից ֆինանսական շահույթ ստանալը

Մարդու մարմինը և նրա անդամները ֆինանսական շահույթ ստանալու աղբյուր չեն հանդիսանում:

Բժշկական միջամտության արդյունքում մարդու մարմնի մասերը կարող են պահպանվել և օգտագործվել միայն այն նպատակով, ինչ նպատակով դրանք վերցվել են: Այլ նպատակներով դրանք կարող են օգտագործվել միայն համապատասխան թույլտվության առկայությամբ:

Անձը, որին միջամտության հետևանքով վնաս է հասցվել, իրավունք ունի պահանջել արդարացի փոխհատուցում, որի պայմաններն ու ընթացակարգը նախատեսված են օրենքով:

# ՆՈՐ ՕՐԵՆՔՆԵՐ ԵՎ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

**«Իրավական մշակույթ» պարբերականի խմբագրությունն այսուհետև ընթերցողների ուշադրությանն է ներկայացնելու առանձին ժամանակահատվածում նոր ընդունված Հայաստանի Հանրապետության որոշ օրենքների և Հայաստանի Հանրապետության կառավարության օրենքի ուժ ունեցող որոշումների ցանկը՝ տեղեկացնելով հետաքրքրական և առավել կիրառելի օրենսդրական և նորմատիվային փոփոխությունների մասին: Ուստի ստորև տպագրում ենք ՀՀ կիրառելի որոշ օրենքներ:**



ՀՀ ՆՈՐ ՕՐԵՆՔՆԵՐ

**Օրենք «Գյուտերի, օգտակար մոդելների և արդյունաբերական մոդելների մասին»:**

Ընդունված է 2008 թ. հունիսի 20-ին: Ուժի մեջ է մտնում 2009 թ. հունվարի 1-ից:

**Օրենք «Ֆիրմային անվանումների մասին»:**

Ընդունված է 2008 թ. հունիսի 10-ին: Ուժի մեջ է մտնում 2009 թ. հունվարի 1-ից:

**Օրենք «Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան ու համալիր ծրագրերը հաստատելու մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին»:**

Ընդունված է 2008 թ. հունիսի 10-ին: Ուժի մեջ է պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից (2008 թ. հունիսի 10):

**Օրենք «Անվավեր հիմնադիր փաստաթղթեր ունեցող բնակարանային կոոպերատիվների անդամների սեփականության մասին»:**

Ընդունված է 2008 թ. հունիսի 10-ին: Ուժի մեջ է պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից (2008 թ. հունիսի 10):

**Օրենք «Երևան քաղաքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին»:**

Ընդունված է 2008 թ. հունիսի 10-ին:

Ուժի մեջ է պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը (2008 թ. հունիսի 19):



ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

Որոշում «Գյուտատնտեսական կենդանիների կարամտիմի սահմանման և չեղյալ հայտարարման կարգը հաստատելու մասին»:

Ընդունված է 2008 թ. հունիսի 26-ին: Ուժի մեջ է պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը (2008 թ. օգոստոսի 16):

Որոշում «Գյուտատնտեսական նշանակության և բնակավայրերի հողերի կադաստրային արժեքների (գների) ու կադաստրային զուտ եկամտի 2008 թվականի չափերը սահմանելու մասին»:

Ընդունված է 2008 թ. հունիսի 24-ին: Ուժի մեջ է պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը (2008 թ. օգոստոսի 16):

Որոշում «ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ նստիկանության համակարգի և ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության համակարգի զինծառայողների բնակարանային ապահովության մասին»:

Ընդունված է 2008 թ. հունիսի 24-ին: Ուժի մեջ է պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը (2008 թ. օգոստոսի 16):

ԴԱՐՁՅԱԼ ԱՀԱԶԱՆԳՈՒՄ ԵՆ ՍԵՎԱՆԻ ԽՆԴՐԻ ՇՈՒԻՉ

ՍԵՎԱՆԸ ՀԵՌԱՆՈՒՄ Է ՄԵԶՆԻՑ

Վա՛յ անօրեն կանոններ դնողներին և այն դպիրներին, որ անիրավություն են գրում: Եսայի Ժ:1-2

Սևանա լճից մինչև 360 մլն խմ ջրի բացթողումների կրկնապատկման մասին որոշումն ընդունվեց հոգուտ մի խումբ հարուստ մարդկանց, ովքեր փրկում են իրենց ջրօրհներդն ու հյուրանոցները ջրի տակ մնալուց:

Այսպիսի կարծիք հայտնեցին գիտնականները, հասարակական կազմակերպությունների և տեղական համայնքների ներկայացուցիչները Գավառի Օրհուս կենտրոնում օգոստոսի 27-ին տեղի ունեցած հանդիպման ընթացքում: «Լճի մակարդակն իջնում է մեր աչքերի առաջ... Ամեն օր մերկանում են նորանոր տարածքներ... Մենք տեսնում ենք, որ Սևանը հեռանում է մեզից», - ասազանգում են տեղի բնակիչները:

Սևանի ափին ավելի քան 450 շինություն կա, որոնց մեծ մասն ապօրինի կառույցներ են: Այդ շինությունների հետա-

զա ճակատագրի անորոշության խնդիրը ծառայում է այն ժամանակ, երբ Սևանի մակարդակն սկսեց զգալիորեն բարձրանալ: Դեռևս 2003-2004 թթ. 33 բնապահպանության նախարար Վարդան Այվազյանը, ով այժմ զբաղեցնում է 33 ԱԺ-ի ՏՆ-տեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի պաշտոնը, բազմիցս հայտարարել է, որ ապօրինի շինությունների համար որևէ փոխհատուցում նախատեսված չէ, մոյնիսկ եթե դրանք ծածկվեն ջրով: Օգոստոսի 21-ին 33 ԱԺ-ում Սևանից բացթողումների ավելացման վերաբերյալ որոշման շուրջ քննարկումների ընթացքում Վարդան Այվազյանը կողմ քվեարկեց Սևանից 360 միլիոն խմ ծավալով ջրի բացթողման որոշմանը՝ լրագրողներին հայտարարելով, թե ովքեր բարձացնում են Սևանի ափի ապօրինի շինությունների խնդիրը, թող

ուղևորվեն հոգեբուժարան: Տեղի բնակչությունը խորապես անհանգստացած է, քանզի իր կարծիքն ու ձայնը լսելի չեն: «Բավական է՝ բաքնվեք ժողովրդի հոգսերի հետևում: Դրան արդեն ոչ ոք չի հավատում... Սևանի քաղաքային բացի՝ բոլորս դեմ ենք այդ որոշմանը և այդ մասին հայտարարել ենք 33 բնապահպանության նախարարությունում, բայց մեզ լսող չկար... Սևանը խնդիր չունի, Սևանի հետ խնդիրներ ունեն օլիգարխները... Այդ որոշումը դավաճանություն է և հանցագործություն է... Այդ որոշումն ընդունողները պետք է ժողովրդի առջև պատասխան տան...»,- հայտարարեցին տեղի հասարակական կազմակերպությունների և գյուղական համայնքների ներկայացուցիչները:

ՍԵՎԱՆԻ ՈՉՆՉԱՅՄԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ԿԱՅԱՑՆՈՂՆԵՐԸ ՊԵՏՔ Է ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԵՆ

թյուն» կուսակցության պատգամավոր Ստեփան Սաֆարյանը, փորձագիտական հանձնաժողովը չի կատարել իր առաքելությունը՝ անցկացնել փորձաքննություն Սևանի պահպանման գործում, քանի որ եզրակացությունն առնչվում է միայն գյուղատնտեսական հարցերին, ոչ թե Սևանի պահպանմանը:

Ներկայացնենք ընդդիմադիր կողմերի փաստարկները:

33 ջրային տնտեսության կոմիտեն հաստատում է, որ Ազատի և Ապարանի ջրամբարները դատարկ են, գետերը՝ սակավաջուր, և չեն կարողանում ապահովել ոռոգման համար անհրաժեշտ ջրի ծավալ: Կոմիտեն այլ փաստարկ չի բերում:

Մենք հակիրճ ներկայացնում ենք ԿԳԹ Էվելինա Ղուկասյանի (33 ԳԱԱ 3իդրոէկոլոգիայի և ձկնաբուծության ինստիտուտ), ԱԳԿ Կարինե Դանիելյանի (Հանուն կայուն մարդկային զարգացման ասոցիացիա), տնտեսագետ Սովետա Արիստակեսյանի («Տնտեսական իրավունքի կենտրոն» 34), մասնագետ Համլետ Մելքոնյանի (Հայաստանի դոմետ) փորձագիտական գնահատականները:

2008 թ. երաշտի նշաններ նկատվեցին միայն մարտ-ապրիլ ամիսներին: Տարեկան ջերմաստիճանի ցուցանիշների համեմատությունը ոռոգման ընթացքում՝ 2001 թ.-ից սկսած, վկայում է այն մասին, որ 2008 թ. ջերմաստիճանային ռեժիմի առումով բավականին բարեհաջող է գյուղատնտեսական գործունեությունը համար:

Այս տարի բերքատվությունը գերազանցում է նախորդ տարվա բերքատվությունը, ընդ որում՝ ցուցանիշները վերցված են այն մշակաբույսերի համար, որոնք շատ են ջուր պահանջում: Ազատի և Ապարանի ջրամբարները խնդիրներ ունեն կապված ոչ թե երաշտի, այլ ջրամբարների տեխնիկական վատ վիճակի հետ, որոնք հարկավոր է լուծել ոչ թե Սևանա լճի, այլ ջրային ռեսուրսների ռացիոնալ և գրազետ կառա-

վարման հաշվին: 33 կառավարության որոշումը բխում է օլիգարխների շահերից, որոնք կապիտալ շինություններ ունեն Սևանի ափին (Սևանի քաղաքապետարանի տվյալներով՝ շուրջ 450): Դրանց ջրածածկման դեպքում բաց է մնում փոխհատուցման հարցը, քանի որ շինությունների մեծ մասն անօրինական է:

33 կառավարության որոշումը բխում է նրանց կոռուպցիոն շահերից, ովքեր կարող են առանց վերահսկողության օտագործել ջրի բացթողումների արդյունքում առաջացող էլեկտրաէներգիան:

Եզրահանգումն այն է, որ ոչ մի դեպքում չի կարելի ավելացնել Սևանից ջրի բացթողման ծավալը: Կլիմայի փոփոխության կանխատեսման համաձայն տարեկան միջին ջերմաստիճանի բարձրացումը 0,5 աստիճանով կառաջացնի լճի մակարդակի կտրուկ անկում: Լճի ջուրը ոչ միայն կպակասի, այլև կակտիվանան ճահճացման գործընթացները, ինչը կհանգեցնի Հայաստանի և ամբողջ Կովկասի տարածաշրջանի ջրային ռազմավարական պաշարի կորստին:

ԻՆՊԱ ԶԱՐԱՑՅԱԼ

«Էկոլուր» տեղեկատվական 34-ի նախագահ

ԽՍԲԱԳՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ. Այսպիսի բաներ: «Օրենք» հասկացությունն, ընդհանրապես, ենթադրում է շարունակաբար ծագող հասարակական որոշակի հարաբերությունների կարգավորման համար ընդունված կանոն՝ երկարատև ժամանակահատվածի համար: Օրենքն այստեղից, ըստ նպատակահարմարության լուծումների համար չէ: Ըստ նպատակահարմարության, տվյալ պահին ինչ-ինչ շահերի լուծման գործիք դառնալով՝ օրենքը վերածվում է անօրինության, իսկ իրավունքն՝ անիրավության:

Այո՛, դա պետք էր այդ մարդկանց, և նրանց հաջողվում է անգամ օրենքը մի քանի ամսով փոխել, կասեցնել, շրջանցել՝ անիրավությունը, կամայականությունը ներկայացնելով որպես իրավունք, օրենք: Մնում է միայն Ազգային ժողովի 84 պատգամավորներին դարձյալ հիշեցնել Աստվածաշնչյան զգուշացումը, որ դրված է այս էջի բնաբանում:

Հաշվի չառնելով գիտնականների, փորձագետների և հասարակության կարծիքը՝ 33 ԱԺ-ն 83 կողմ և 4 դեմ («Ժառանգություն» կուսակցություն) ձայներով հաստատեց «Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան և համալիր ծրագրերը հաստատելու մասին օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրինագիծը: Ըստ այդ օրենքի՝ Սևանա լճից ջրառքի ծավալն ավելանում է մինչև 360 միլիոն խմ (2007 թ. թույլատրելի սահմանը կազմում էր 170 միլիոն խմ):

- Սևանի դատավիճիկը ստորագրեցին.
- 33 ԱԺ 83 պատգամավոր՝ տարբեր կուսակցություններից.
- 33 ջրային տնտեսության կոմիտեն.
- 33 բնապահպանության նախարարությունը.



Գևորգ Բաշինջադյան

- 33 ԱԺ գյուղատնտեսության և բնապահպանական հարցերով մշտական հանձնաժողովը.
- 33 ԳԱԱ-ին առընթեր Սևանա լճի պահպանման փորձագիտական հանձնաժողովը:

Նշենք, որ խորհրդարանական հանձնաժողովն այս հարցն ընդհանրապես չի քննարկել: Ինչ վերաբերում է 33 ԳԱԱ-ին առընթեր Սևանա լճի պահպանման փորձագիտական հանձնաժողովի դրական եզրակացությանը, ապա մի քանի հավաստի աղբյուրներից հայտնի դարձավ, որ հանձնաժողովը չի անցկացրել փորձագիտական գնահատում: Հանձնաժողովի անունից եզրակացությունը ստորագրել է հանձնաժողովի նախագահ, 33 ԳԱԱ ակադեմիկոս Ֆադեյ Սարգսյանը:

Նույն աղբյուրներից հայտնի դարձավ նաև, որ հանձնաժողովի այն անդամներին, ովքեր դեմ էին Սևանի ջրի ծավալի բացթողումների ավելացմանը, թույլ չեն տվել մասնակցել խորհրդարանի միստին: Ինչպես հայտարարեց «Ժառանգու-

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

Իրանում մարմնավաճառության համար քարկոծում են

«Հավասարություն այժմ» միջազգային ճանաչված իրավապաշտպան կազմակերպությունը մեծապես մտահոգված է իրանցի մի կնոջ՝ Կորբա Նաջարի ճակատագրով, ով ամուսնական անհավատարմության մեղադրանքով դատապարտվել է մահապատժի քարկոծման միջոցով և կորցրել համաներման համար վերջնական դիմում ներկայացնելու հնարավորությունը: Մահապատիժը կարող է ի կատար ածվել ամեն րոպե:

Իրականում Կորբա Նաջարն ընտանեկան բռնության զոհ է: Նրա թմրամոլ ամուսինը սեփական կնոջը հարկադրել է զբաղվել մարմնավաճառությամբ իր «ծախսերը» փակելու համար: Խղճալով կնոջը՝ նրա «հաճախորդներից» մեկն սպանել է Կորբայի ամուսնուն:

Կորբան բանտում արդեն իսկ անցկացրել է ազատագրվման 8 տարիներ՝ որպես ամուսնու սպանության հանցակից: Մարդասպանը 8 տարի կալանավայրում անցկացնելուց հետո, փոխհատուցման գումար վճարելով և 100 մտորակի հարված ստանալով, ազատ է արձակվել, մինչդեռ Կորբային սպառնում է ամխուսափելի մահապատիժ՝ քարկոծման միջոցով:

Իրանում ամուսնական դավաճանությունը միակ հանցագործությունն է, որը պատժվում է քարկոծմամբ:

Քարկոծման միջոցով պատժի կիրառումը կոպտորեն խախտում է Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը, որը վավերացված է նաև Իրանի կողմից: Համաձայնագիրն արգելում է խոշտանգումը, դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքն ու պատիժը:

«Հավասարություն այժմ» կազմակերպությունը կոչ է անում պարտավորեցնել Իրանի պաշտոնյաներին անհապաղ ազատել Կորբային և օրենսդրությամբ արգելել դաժան, անմարդկային և նվաստացնող պատժաձևերը:

Իրանը պետք է վերացնի երիտասարդների նկատմամբ կիրառվող մահապատիժը

ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակը դիմել է Իրանի կառավարությանը՝ հորդորելով վերացնել մահապատժի կիրառումը դեռահաս իրավախախտների նկատմամբ: Դեռևս օգոստոսի 19-ին և 26-ին մահապատիժներ են իրականացվել համապատասխանաբար 15 և 16 տարեկանում հանցանք գործած Ռեզա Հեդջազի-ի և Բեհնամ Չաարի նկատմամբ:

Ըստ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակի խոսնակ Բուլիերթ Կոլվիլի՝ սրանք միջազգային օրինախախտումների ակնառու օրինակներ են, այն դեպքում, երբ միջազգային օրենսդրությամբ արգելվում է մահապատժի ենթարկել անչափահաս իրավախախտներին: Նա ավելացրել է, որ Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի և Երեխայի իրավունքների մասին միջազգային համաձայնագրի հիման վրա Իրանը պարտավոր է վերացնել մահապատժի կիրառումը 18 տարեկանից ցածր անձանց նկատմամբ:

Փաստերը վկայում են, որ Իրանում այս տարի ավելացել է մահապատիժների թիվը՝ հասնելով 220-ի: Նրանցից 6-ը անչափահասներ են եղել:

# ՄՇԱԿՈՒՅԹ

1

## ԱԶԳԱՆՈՒՄԸ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԱՆԱՂԱՐՏ ՎԿԱ

Այդպես մեր աչքը տեսնում, մեր ունկը լսում է հայերեն բառ-արմատն ու նրան հարազատորեն մերված հայաչույց -յանը, և ազգանվանակիրն ինքն էլ արագ հարազատանում է մեզ (օտարների ու օտարության մեջ՝ առավել ևս)՝ ազգակից լինելու տաք-հեռավոր խլիրտներ արթնացնելով մեր գիտակցության ու հոգու խորքերում:

Եզու մաքրելու փորձ հայերս, փառք Աստծո՛ւ, ունենք: Հիշենք, որ ընդամենը երկու տասնամյակ առաջ Հայաստանի տեղանունների ցանկում չափազանց շատ էին թուրքական ծագման անունները, մասնավորապես աղբյուրանունները (առանց բացատրության) բնակավայրերը թուրքաբանում էին. այդպիսին էին նաև շատ հայաբնակ բնակավայրեր: Ազգային զարթոնքով պայմանավորված՝ սկսվեց բնականունների հայացման կարևոր մի գործընթաց, և վերստին սկսեցին հայերեն շնչել բազմաթիվ տեղանուններ: (Դրանց մեջ նաև հայտնվեցին բարեհնչությամբ և բառակազմական օրինավորությամբ բացառիկ գեղեցկության անուններ՝ Պաղակն, Աղվորիկ...):

Արդ ի՞նչն է խանգարում, որ նույնը փորձենք անել նաև մեր տոհմանունների համար՝ սրբելով դրանց ամոթը, վերստին հայերենացնելով-հայացնելով դրանք, հրաժարվելով օտար, առավելապես թուրքական ծագումով արմատներից:

Անշուշտ, դժվար է հրաժարվել սեփական ազգանունից, որքան էլ այն օտարարմատ-օտարահունչ է: Մանավանդ որ այդ ազգանունները հայոց մեջ կենցաղավարել են բավական երկար ժամանակ, և դրանց շուրջ գոյացել է հնամենի-ուրջան մի պատրանք, որը «ավանդապահ» մնալու ինչ-ինչ դրոշմներ ունի իր մեջ: Հետևաբար ոչ մեկը հեշտությամբ չի համաձայնի կորցնել իր ազգանվան հարյուրամյա «հնավանդությունը»: Բացի այդ՝ ազգանունը փոխելը դժվար է հոգեբանորեն, հեշտ չէ նաև այդ ամենի իրավաբանական ընթացքը: Սակայն պետք է հիշել, որ հրաժարվելով օտար բառից ու արմատից՝ մենք վերադարձ ենք կատարում մեր արմատին, որ բազում դարերի հեռավոր խորքերում է, ոչ թե ընդամենը մի քանի հարյուր տարվա հեռավոր:

Ուստի ժամանակը չէ՞ ազգանունը հռչակել ազգային արժեք՝

ենթակա սրբվելու ժամանակի ժանգից՝ օտարի շնչից, ինչպես որ եղավ տեղանունների պարագայում:

Հնարավոր չէ՞ օգտվել իրավաբանորեն հարմար և հոգեբանորեն դյուրին (թերևս) հետևյալ տարբերակից՝ սկիզբ դնել անունամաքրման համազգային մի գործընթացի՝

սկսելով մեր մոր ծնված-ծնվող գավակների՝ մեր որդիների, մեր

թոռների ազգանունները հայացնելուց:

Ի վերջո, կարող է, չէ՞, մի թարջունանյան կամ Թուրունջյան, Ղարաբեշիշյան կամ Օդաբաշյան իր նորածին զավակի՝ որդու, թոռան համար ազգանուն դարձնել հոր, պապի կամ նախապապի Արամ, Տիգրան, Մեսրոպ, Մովսես անունը:

Անշուշտ, կարող է: Եթե կամենա: Եթե ազգային արժանապատվություն ունի և պատվախնդրություն:

ԵՆԿՈՆ ՍԱՐԳՅԱՆ

### ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

Հեղինակը վաղուց հասունացած, կարևորագույն հարց է բարձրացնում, որի լուծումն առանց պետական աջակցության շատ դժվար կլինի:

Հարկ է, որ կառավարությունը ընդունի անուն-ազգանունների փոփոխման պարզեցված կարգ, որպեսզի ցանկացողները հեշտությամբ, առանց հոգեցուցիչ թղթաբանության, քաշքշուկների ու ծախսերի կարողանան մաքրել, սրբել իրենց անունը, ազգանունը, տոհմանունը:

## ՄՇԱԿՈՒԹՅԱՆ ԼՐԱՔԱՂ

### Սպասվում է սեպտեմբերյան զարթոնք

Սեպտեմբեր ամսին սկսվում է հայ մշակութային կյանքի նոր փուլը: Ամռան ամիսներին հանգիստ վայելած գրեթե բոլոր թատրոնները, վերադառնալով արձակուրդից կամ հյուրախաղերից, բացում են իրենց դռները նոր թատերաշրջաններով:

Սեպտեմբերի 7-18-ը երևանում կանցկացվի Շեքսպիրյան միջազգային թատերական փառատոնը՝ հայ հանդիսատեսին նվիրված մի շարք ուշագրավ ներկայացումներ, ինչպես օրինակ՝ «Համլետ» պիեսը՝ Մոսկվայի գեղարվեստի թատրոնի և Թբիլիսիի ազգային թատրոնի բեմադրություններով:

Հայ թատերասերները կարող են դիտել նաև Նարեկ Դուրյանի «Մորաքույրը Փարիզից» ներկայացումը:

Ինչ վերաբերում է երաժշտական միջոցառումներին, ապա սեպտեմբերի 2-ից կմեկնարկի Երևանի երկրորդ միջազգային երաժշտական փառատոնը և համերգներով կշարունակվի մինչև սեպտեմբերի 24-ը:

Երևանում սպասվում է նաև ջազի տոն: «Հայկական ջազ - 70» հոբելյանական միջոցառումների շրջանակներում համերգով հանդես կգա վրացական ջազի փայլուն ներկայացուցիչ Նինո Կատամաձեն, իսկ ամսվա վերջին երկար տարիների ընդմիջումից հետո հայրենիքում ելույթ կունենա «խորհրդային ջազ վոկալի թագուհի» Տաթևիկ Հովհաննիսյանը:

### Տիգրանակերտի պեղումները շարունակվում են



Հայոց արքայից արքա Տիգրան Մեծի հիմնած քաղաքներից մեկի Արցախի տարածքում գտնվող Տիգրանակերտի պեղումների ուղղությամբ 2008 թ. մեծածավալ աշխատանքներ են կատարվել: Նախատեսվում է շուրջ երեք տարի առաջ մեկնարկած (այս տարի մեկնարկը տրվել է հունիսին) պեղումների այս փուլը դադարեցնել սեպտեմբերի 10-ին:

ԼՂՀ կառավարության որոշմամբ՝ Տիգրանակերտի տարածքում գյուղատնտեսական և արտադրական որևէ աշխատանքի իրականացումն արգելվում է:

Այս տարի պեղումներ են կատարվել լեռնալանջին գտնվող ամրոցից, կենտրոնական թաղամասերից, մեծ դամբարանադաշտից բաղկացած, 50 հա տարածություն ունեցող քաղաքի վեց հատվածներում: Արդյունքում երևան է եկել միջնաբերդի պարիսպների մնացորդների հիմնական մասը, այդ թվում՝ 9 մետրանոց աշտարակը՝ կառուցված հռոմեական ճարտարապետության ոճով:

Մասնագետների կարծիքով՝ Տիգրանակերտը բազմազգ քաղաք է եղել. այդ են վկայում տարածքում հայտնաբերված այլալեզու արձանագրությունները:

Տարածքի պեղումները կշարունակվեն հետագա տարիներին:

Հնագիտական կանոնների համաձայն՝ հուշարձանը չպետք է մինչև վերջ պեղվի, թույլատրելի սահմանը 20%-ն է, և հաշվարկները ցույց են տալիս, որ հնագույն Տիգրանակերտ քաղաքի պեղումների առկա ընթացքը հնարավորություն կտա տասը տարի անց հայտնաբերել հուշարձանի թույլատրելի մասը:

### «Նարարևույթյան թունանյանական րանաձևը»

Հովհաննես Թումանյանի թանգարանում սեպտեմբերի 6-ին կբացվի «Սրբազան Հայաստան» խորագրով ցուցադրություն՝ բացահայտելու համար, ըստ կազմակերպիչների, «հարատևության թունանյանական բանաձևը»:

Ցուցադրության ընթացքում կներկայացվեն գրողի պատկերացումները հայրենիքի, ազգային մշակույթի և նրա զարգացման հեռանկարների մասին, ինչպես նաև մի շարք արժեքավոր նյութեր՝ Թումանյանի՝ Անի կատարած ճամփորդության մանրամասները, գրողի անձնական հարուստ գրադարանի հայագիտական գրքերը, ի շահ 1915 թ. եղեռնից մազապուրծ հայ մանուկների ծավալած գործունեությունը և այլն:

Լրագաղը՝ ըստ tert.am-ի

## ՆԻՆ ԱՇԽԱՐԿԻ ԻՄԱՍՏԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԻՑ

### Անմեղություն

- Դու անմեղ ես մեռնում,- ասաց կինը Սոկրատին: Նա առարկեց.
- Իսկ դու կցանկանայիր, որ մեղավոր լինեիր:

### Աննահարմար տեղը

Մի մեծահարուստ հպարտությամբ Արիստիպային ցույց տվեց իր շքեղ սենյակները, որոնց հատակները զարդարված էին խճանկարներով: Արիստիպայը հազազ ու թքեց ուղիղ նրա երեսին, իսկ նրա կատաղությանն ի պատասխան ասաց.

- Ավելի հարմար տեղ չկար:

### Վատ տրամադրության պատճառները

Արիստոտելին հարցրին.

- Ինչու՞ են նախանձ մարդիկ միշտ ինչ-որ բանով անհանգստացած:
- Որովհետև նրանց ընկճում են ոչ միայն սեփական անհաջողությունները, այլև ուրիշների հաջողությունները,- պատասխանեց նա:

### Անն աղբյուրից

- Որքա՞ն են նվաստացել: Դու պատրաստ ես սովորել առաջին պատահած մարդուց,- նախատեցին մի փիլիսոփայի:
- Գիտելիքն այնքան արժեքավոր բան է, որ պարսավելի չէ այն ստանալ ցանկացած աղբյուրից,- պատասխանեց փիլիսոփան:

### Ավելի լավ է լռել

- Մեկն ասել է.
- Ես հաճախ եմ զղջացել նրա համար, որ խոսել եմ, բայց հազվադեպ եմ ավստսել, որ լռել եմ...

### Ինչ էին մտածում

Երկու վանական, որ աշխարհիկ կյանք էին վերադարձել և անուսնացել, ի վերջո զղջացին և վերադարձան մենաստան: Երբ նրանց ապաշխարության ժամանակը լրացավ, և նրանք ելան իրենց խցերից, բոլոր

ըր տեսան, որ մեկի դեմքը մռայլվել, անճանաչելիորեն փոխվել էր, մյուսինը շողում էր լուսավորությունից: Սուրբ հայրերն այսպես էին դատում. «Մեկը մտածել է գեհեճի կրակների և իր մեղքերի մասին, իսկ մյուսը՝ Աստծո ներողամտության»:

### Ներել, ոչ թե վրեժխնդիր լինել

Մի իմաստուն ասել է.

- Մեղքը ներելով՝ ավելի շատ բավականություն են գգում, քան վրեժխնդիր լինելով: Երբ ներում են, քեզ ուղեկցում է փառքը, երբ վրեժ են լուծում, քեզ տանջում են զղջումն ու խղճի խայթը:

### Մանկավարժական հնար

Մի ուսուցիչ ձևացրեց, թե նոր բան է սովորում իր աշակերտի պատասխանից: Այդ ժամանակ նրան հարցրին.

- Մի՞թե նրա մտան մարդիկ կարող են քեզ ինչ-որ բան սովորեցնել:
- Եվ նա պատասխանեց.
- Հարցն, իհարկե, ես ավելի լավ գիտեմ, քան նա: Բայց ցանկանում եմ, որ նա բավականություն ստանա ուրիշների ուսուցանելուց, որպեսզի նրա մեջ գորանա ուսանելու ցանկությունը:

### Հարուստ է արդյոք հարուստը

- Դիտեցենեսին հարցրին, թե իսկապես հարուստ է արդյոք մի հարուստ մարդ:
- Զգիտեմ,- պատասխանեց նա,- միայն գիտեմ, որ նա շատ դրամ ունի:
- Այսինքն՝ հարուստ է:
- Հարուստ լինել և շատ դրամ ունենալ՝ տարբեր են,- ասաց Դիտեցենեսը:- Իսկապես հարուստ է այն մարդը, ով լիովին բավարարված է իր ունեցածով: Նա, ով ձգտում է ունենալ իր ունեցածից ավելին, աղքատ է նրանից, ով ոչինչ չունի, բայց չի դժգոհում...

### Զգուշացեք գովեստներից

- Երբ մի անգամ հիմար մարդիկ գովում էին Անտիսֆենին, նա ասաց.
- Վախենում եմ, մի հիմար բան արած չլինե՞մ:

# Հոգեւոր

## ՄԻ ԶԱՐԲԱՆԱԼԻ ՄՔԱՆՉԵԼԻՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Մի մարդ՝ Առուսիոս անունով, ինքնիրեն մտածում է. «Ահա լիացած եմ Աստծո պարգևներով, մեծ ունեցվածքի և հարստության տեր եմ, ուստի երկու սկուտեղ կպատրաստեմ՝ մեկը՝ Սուրբ Մինաս տաճարին շնորհելու, մյուսը՝ ինձ համար»: Ուստի պատվիրում է երկու նույնաչափ սկուտեղներ: Երբ դրանք պատրաստվում են, պարզվում է, որ Սուրբ Մինասին նվիրելիք սկուտեղն առավել գեղեցիկ էր, քան իրենը: Այս տեսնելով Առուսիոսը ցանկանում է սեփականել սրբի անվամբ պատրաստված սկուտեղն ու մտածում. «Կգնամ Սուրբ Մինասի մոտ, կնվիրեմ իմ անվամբ սկուտեղը, իսկ մահիցս հետո երկրորդ սկուտեղն էլ կնվիրեմ նրա տաճարին»:

Երբ ժամին ծառան սկուտեղը տանում է ծով՝ լվալու: Այդ ժամանակ փոթորկվող ծովի ահագնացող մի ալիք խլում է սկուտեղը ծառայի ձեռքից՝ կորցնելով իր խորքերում: Սարսափած ծառան երկնչելով, թե տերն իրեն տանջանքի կենթարկի, ինքն էլ նետվում է ծովը:

Իմանալով եղելության մասին Առուսիոսը տրտմում է. «Վա՛յ ինձ, քանզի մեղանչեցի Աստծո դեմ՝ զրկվելով իմ ազնիվ ծառայից և ամոթալի վիճակում հայտնվելով Տիրոջ ու մարդկանց առաջ: Արդ՝ միայն թե գտնեմ նրա դիմ և թաղեմ, երկու սկուտեղ կնվիրեմ Մինասին»: Մինչ նա այս խոսքերով կշտամբում էր իրեն ու լալիս, այն նավը, որով մեկնել էր, հասնում է նավահանգիստ: Առուսիոսը գնում է ծովագերբը, փնտրում կորած դիմ, իսկ նավակարն ասում է. «Ի՛նչ անմտություն, ծառադ երեք օր է, ինչ խեղդվել է ծովում»: Առուսիոսը պատասխանում է. «Թողություն տվեք ինձ, եղբայրներ, և մի մեղադրեք, քանզի տառապում եմ սիրելի ծառայիս կորստյան պատճառով: Ապավինում եմ Քրիստոսին և Սուրբ Մինասին, ով կարողացավ անդամահատ մարդուն կենդանացնել: Գուցե նա ցույց տա ծառայիս դիակի տեղը, որ թաղեմ»: Այդ ժամ հայտնվում է ծառան՝ սկուտեղը ձեռքին՝ որոնելով իր տիրոջ նավը: Ծառային տեսնելով տերը գրկում ու

փայփայում է նրան ասելով. «Ահա իմ ծառան: Արդարև, մահացել էր և հարություն առավ: Ցնծում եմ, քանզի Աստված ողորմաց ինձ՝ Սուրբ Մինասի բարեխոսությանը»: Ապա, շրջվելով դեպի ծառան, հարցնում է, թե ինչպես ծովն ընկավ և փրկվեց: «Տեր իմ, պատասխանում է ծառան, սկուտեղը ծովում լվալիս գոր ալիքն այն խլեց ձեռքիցս, և թո պատժից երկնչելով՝ նետվեցի ծովը: Ջրերում ինձ երևաց մի լուսավոր մարդ, որ երկու այլ մարդկանց ասում էր. «Բռնեք նրան և մի՛ թողեք»: Այդ մարդիկ էլ ինձ փրկեցին՝ ցամաք հանելով»:

Առուսիոսը սրբին է նվիրաբերում սկուտեղները՝ տուն վերադառնալով և փառաբանելով Աստծուն...

«Յասնաւորք»  
Գրաբարից արևելահայերենի փոխադրեց  
ԽՈՐԵՆ ՍԱՐԿԱՎԱԳ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ

## ՀՈԳԵՇԱ՞՛Հ, ԹԵ՞ ՀՈԳԵԿՈՐԾԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ

...Մարդն առհասարակ երգի ու երաժշտության պահանջ ունի: Բայց ինչպիսի՞ երգի ու երաժշտության: Հոգեշահ, թե՞ հոգեկործան: Աշխարհիկ մարդուն կարող էր պատկերացնել առանց երգի ու երաժշտության: Ոչ: Առանց դրա նա իրեն անհանգիստ ու մի տեսակ դատարկ է զգում: Եվ ավելին, ռոք, ռեգի և նմանատիպ այլ երաժշտության միջոցով, որը զուրկ է հոգևոր շնչից և հոգեշահ խոսքից, սատանան մարդկանց մղում է անասնական ցանկությունների կրքերի, որոնք ուղեկցվում են անպարկեշտ շարժումներով: Սուրբ հայրերը դրանք կոչել են «գոտկատեղից ներքև շարժումներ»: Այդ մասին Տաթևացին

գրում է. «Բնարն ու տավիրը սատանայազյուտ էին, որ կրքերի էին մղում, և Դավիթը քնարին խառնեց հոգու խոսքը, որպեսզի սատանայի սրով հենց նրան խոցի, և հալածեց Սավուդի միջի դեղին: Կենդանիներն ունեն ծայն, բայց չունեն խոսք, որ ընծայեն Աստծուն, իսկ մարդը, որպես արարածների գլուխ, ծայնով խոսքն է մատուցում»:

Ուրեմն ինչու՞ պետք է քրիստոնյա մարդը մնա առանց հոգեշահ երաժշտության. չէ՞ որ մեր բոլոր ծիսական արարողությունները, մանավանդ սուրբ պատարագն ու ժամերգությունները կատարվում են երգածայն ընթերցանությամբ, երաժշտությամբ ու սաղմոսերգություն-

ներով: Մեր շարականները սուրբ հայրերի աղոթքներով երկնքից տրվել են հենց այդ նպատակի համար, և մեր ազգը դարձրելով ամեն առավոտ ու երեկո մասնակցելով եկեղեցական ժամերգություններին, հոգու զորություն ու բժշկություն է ստացել: Ու այդ պատճառով հեշտության մեջ, մանավանդ, հաղթական հոգով է դիմակայել բոլոր դժվարություններին՝ թե՛ ընտանեկան, թե՛ կենցաղային և թե՛ ազգային:

Մեիրուժան Բաբաջանյանի  
«Բան բժշկության» գրքուկից

## ՄԿՐՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻՆ ՈՒ ԿԱՐԳԸ

**Ի՞նչ է մկրտությունը:**  
- Մկրտությունը բառացի նշանակում է լվացում, մաքրություն, իսկ կրոնական իմաստով՝ ջրով կատարվող արարողությունը՝ սրբելու համար մկրտվողի մեղքը, որը կոչվում է առաջին կամ սկզբնական մեղք: Մկրտությունը կոչվում է նաև վերստին ծնունդ, որովհետև մկրտվողը մաքրվում է արանական մեղքից և նորից ծնվում ավագանի (Գովհ. Գ):

**Մկրտությունն անհրաժեշտ պայման է քրիստոնյա լինելու համար:**

- Այո: Մկրտության կարևորությունը հասկանալու համար պետք է գիտենալ, որ նույն ինքը՝ մեր Տերը, նույնպես մկրտվեց Հորդանան գետում Հովհաննես Սկրտչի կողմից (տե՛ս Մատթ. Գ 13-17, Մարկ. Ա 9-11, Դովհ. Գ 2-22, Դ 1): Հետո, երբ Իր առաքյալներին ուղարկեց քարոզության, պատվիրեց նրանց. «Մրանից հետո գնացեք, Ավետարանի աշակերտ դարձրեք բոլոր ազգերին, մկրտեցեք նրանց Հոր և Որդու և Սուրբ Հոգու անունով» (Մատթ. ԻԸ 19):

**Սեր Տերն ինչու՞ մկրտվեց:**

- Հիսուս Քրիստոս կատարյալ մարդ էր, բայց մկրտվեց մեղավոր մարդկությանը ցույց տալու համար, թե մկրտությունն անհրաժեշտ պայման է վերստին կամ հոգևոր ծննդյան համար:

**Ո՞րն է մկրտության պայմանը:**

- Հավատքը: Մկրտվողը պետք է հավատա Ամենասուրբ Երրորդությանը, որովհետև ինչպես տեսանք, Հիսուս Քրիստոս ասաց. «Մկրտեցեք նրանց հանուն Հոր և Որդու և Սուրբ Հոգու»: Եվ դարձյալ. «Նա, ով հավատում է և մկրտվում, պիտի փրկվի, իսկ նա, ով չի հավատում, պիտի դատապարտվի» (Մարկ. ԺԳ 16):

**Ուրեմն, մկրտվողը պետք է խելահաս լինի, որպեսզի գիտենա, թե ինչ է հավատքը և այլն:**

- Այո: Մկրտության եկողը պետք է գիտենա, թե ինչ է հավատքը, ինչ է Ամենասուրբ

Երրորդությունը և այլն, որպեսզի գիտակցությամբ մկրտվի և փրկվի իր հավատքով:

**Եթե այդպես է, ուրեմն ինչու՞ ենք մկրտում նորածններին, որոնք դեռևս ոչինչ չգիտեն:**

- Ծնողները պարտավոր են հոգալ իրենց զավակներին և՛ մարմնավոր, և՛ հոգևոր պետքերը: Հայրերն ու մայրերը հոգում են իրենց զավակների ապրուստի, կրթության համար, հայրենասիրություն սերմանում նրանց մեջ և այլն, ուստի բնական է, որ իրենց զավակներին նաև կրոնական դաստիարակություն տան մինչև նրանց խելահաս դառնալը:

**Իսկ ավելի ճիշտ չէ՞, որ փոքրիկները մեծանան, քիչ թե շատ խելահաս դառնան և գիտակցաբար մկրտվեն:**

- Սա շատ նուրբ խնդիր է: Կրոնական ճշմարտությունները և խորհուրդները հասկանալու համար ո՞րն է խելահասության տարիքը: Դժվար է ասել: Հայրն ու մայրը սպասո՞ւմ են, որ իրենց փոքրիկները խելահաս դառնան, այսինչ տարիքն ունենան և նրանից հետո միայն գնան դպրոց կամ որոշեն իրենց ազգությունը: Սա անբնական է և հակառակ ողջամտության: Բացի դրանից՝ մկրտվելով երեխան դառնում է Եկեղեցու անդամ, որի համար տարիքային սահմանափակում չկա:

**Մկրտվելը բավական է քրիստոնյա լինելու համար:**

- Այո, պայմանով, որ մկրտվածներն աճեն իրենց ուղղափառ հավատքի և շնորհի մաքուր կյանքի մեջ, որովհետև նրանց գործվող հավատքով և անապական կյանքով է, որ պայծառանում է Եկեղեցին, փառավորվում քրիստոնեությունը:

**Մկրտությունն ինչպե՞ս է կատարվում Հայաստանյայց Եկեղեցում:**

- Մկրտությունը մեր Եկեղեցում կատարվում է ջրով և առնվազն քահանայության աստիճան ունեցող պաշտոնյայի ձեռքով:

Մկրտվողը գալիս է կնքահոր հետ, մկրտիչ քահանան փոքրիկին երեք անգամ

ընկղմում է ավագանի ջրի մեջ Ամենասուրբ Երրորդության անունով ասելով. «... Ծառայա Յիսուսի Քրիստոսի, եկեալ յերախայուրեմէ ի Սկրտութիւն, մկրտի յանուն Հոր և Որդու և Հոգւոյն Սրբոյ. գնեալ Արեամբն Քրիստոսի ի ծառայութեմ մեղաց, ընդունի գորդեգրութիւն Հորն երկնաստորի՝ լինել ծառանգակից Քրիստոսի և տաճար Հոգւոյն Սրբոյ»:

**Ո՞րն է մկրտության խորհուրդի արդյունքը:**

- Մկրտվելով մարդիկ ոչ միայն սրբվում են մեղքից և որդեգրվում Աստծուն՝ շնորհի կյանքի մեջ, այլև եղբայրանում են իրար՝ որպես սուրբ ավագանից ծնվածներ: Քրիստոնեական Եկեղեցուն մարդկային հավասարության, եղբայրության և արդարության խորհուրդներ իրագործվում են Մկրտության արդյունքով. այս մասին է ասում Պողոս առաքյալը. «Բոլորդ Հիսուս Քրիստոսի հավատքով Աստուծո որդիներ եք: Բոլորդ, որ մի անգամ մկրտվեցիք Քրիստոսով, Քրիստոս եք հազել, խտիր չկա ոչ հրեայի և ոչ հեթանոսի, ոչ ծառայի և ոչ ազատի, ոչ արվի և ոչ եզի, զի իմաց բոլորդ մեկ եք Հիսուս Քրիստոսով» (Գաղատ. Գ 27-28):

**Ո՞րն է մկրտվածների պարտքը:**

- Մկրտության շնորհը պահպանելու համար նրանք պետք է արթուն լինեն: Պետք է միշտ կապված մնան իրենց Փրկչին:

**Ո՞րն է կնքահոր պարտքն ու պաշտոնը:**

- Ցավոք, կնքահայրությունը հաճախ անվանական մի պաշտոն է համարվում: Իրականում կնքահայրը պետք է լինի մկրտվածի՝ իր սանի հոգևոր և աշխարհիկ բարի խորհրդատուն, դաստիարակը: Ծնողների չափ և երբեմն իրանցից առավել մեծ պետք է լինի նրա իրավունքն իր հոգևոր սանի նկատմամբ:

«ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ» գրքից

### ՀՈԳԵՎՈՐ ՏՈՆ ԱՑՈՒԹՅ

Սեպտեմբերի 8 - Տոն ծննդյան Սուրբ Կույս

Մարիամի

Սեպտեմբերի 14 - Խաչվերաց

### ՆՐԱՆԱԿՈՐ ՄԱՐԻԿ ԿԱՏՎԱԾԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ավետարանը միաբարում է մարդուն, ինչ վիճակում և պայմաններում էլ նա գտնվի: Քրիստոսն առինքնում է ողջ մարդկությանը: Առանց նրա ուսմունքի մենք ոչինչ չգիտենք և ոչինչ չենք տեսնում ինչպես Աստծո, այնպես էլ մեր մեջ. առանց Քրիստոսի ամեն ինչ մեզ համար խավար է ու խառնաշփոթություն: Առանց նրա վարդապետության մարդը մատնված է արատների և աղետների, մոլորության, խավարի, հուսահատության ու մահվան: Հետևելով Քրիստոսի ուսմունքին՝ մարդիկ կարող են ազատվել այդ ամենից: Մեր բովանդակ առաքինությունն ու երանությունն ի Քրիստոս է: Առանց Քրիստոսի վարդապետության մարդիկ կհոշոտեին միմյանց, աշխարհը դժոխք կդառնար ու կայլասերվեր:

Բլեզ Պասկալ

### ԳԻՐԻ ԱՌԱԿԱՑ

ՈՒՐԻՇԻ ՊԱՐՏՔԻ ՀԱՄԱՐ ՅԱՆՁՆԱՌՈՒ ՉԼԻՆԵԼ

- 6 Որդեհ'ի, եթե բարեկամիդ Համար երաշխաւոր լինես, դու քեզ կը մատնես քո թշնամուն.
- 2 քանզի մարդուս շրթունքները խիստ որոգայթ են իր Համար, եւ մարդ բռնուած է իր բերանի խօսքով:
- 3 Արդ, որդեհ'ի, վարուի՛ր այնպէս, ինչպէս պատուիրում եմ քեզ, եւ դու կ'ապրես, որովհետեւ բարեկամիդ Համար չար մարդկանց ձեռքն ընկար:
- Սրտապնդուի՛ր եւ մի՛ յուսալքուի՛ր եւ նոյնը Հաղորդի՛ր քո բարեկամին, որի Համար երաշխաւոր ես եղել:
- 4 Աչքերիդ քուն մի՛ տուր եւ թարթիչներիդ՝ նինչ, 5 որպէսզի փրկուես, ինչպէս այժեամբ թակարդից եւ թռչունը՝ ձուլակից:

### ԱՍՏՎԱԾԱՆՆԵՐԻ ԾԱՇՈՒ ԸՆԹԵՐՅՎԱԾՆԵՐ

#### Սեպտեմբերի 1-15

- 1 – Բշ. Սրբոցն Ստեփաննոսի Ուլնցեղոյն և վկայիցն Գոհարիմեայ, Ծամիրոսի, Տուրքիոսի և Ռատիկոսի: Առ 10.1-7, Ես 44.24-26, Եբ 4.11-18, Ստ 5.1-12
- 2 - Գշ. Սրբոց մարգարէիցն Եզեկիելի, Եզրի և Չաբարիայի՝ հօրն Յովհաննու Կարապետին: Եզկ 18.30-32, Ա Կր 2.6-10, Ստ 23.34-39
- 3 - Դշ. Պահք: Բ Կր 3.4-17, Սր 6.45-56
- 4 - Եշ. Սրբոցն Յովհաննու Կարապետին և Յորայ արդարոյն: Առ 20.6-22, Հոր 42.12-16, Ողբ 3.22-56, Գրծ 13.25-33, Հլկ 5.7-11, Ստ 14.1-12
- 5 - Ուր. Պահք: Բ Կր 5.6-18, Սր 7.24-30
- 6 - Շբ. Նիկիոյ Սբ ժողովոյն երեք հարիւր տասն և ութ հայրապետացն (325 թ.): Եզկ 44.23-24, Եբ 12.1-7, Հի 14.25-31
- 7 - Կիր. Գ. կիր. գկնի Վերափոխման: Բարեկենդան Սբ Խաչի Պահոց: Ես 10.12-19, Բ Կր 2.12-3.3, Սր 6.30-44
- 8 - Բշ. Տօն ծննդեան Սրբուհոյ Կուսին Մարիամու յԱմնայէ: Առ 31.29-31, Ես 61.9, Գղ 3.24-29, Ստ 1.1-17
- 9 - Գշ. Բ. օր Խաչի Պահոց: Բ Կր 8.16-24, Սր 8.10-21
- 10 - Դշ. Գ. օր Խաչի Պահոց: Բ Կր 9.1-9, Սր 8.22-26
- 11 - Եշ. Գ. օր Խաչի Պահոց: Բ Կր 9.10-10.6, Սր 9.13-36
- 12 - Ուր. Ե. օր Խաչի Պահոց: Բ Կր 10.7-17, Սր 9.37-49
- 13 - Շբ. Տօն Սրբոյ Եկեղեցոյ ի նաակատիս Սրբոյ Խաչին: Առ 3.9-17, Ես 66.12-16, Ա Տն 3.14-16, Հի 10.22-42
- 14 - Կիր. ԽԱՉՎԵՐԱՑ: Ես 49.13-23, Գղ 6.14-18, Հի 3.13-21
- 15 - Բշ. Տօն Խաչի: Յիշատակ մեռելոց: Ես 65.22-25, Ա Կր 2.6-10, Հի 3.22-36

Տ Ե Ղ Ե Կ Ո Ւ Յ Թ - Ա Ձ Դ - Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

ԻՄ ԲԱԺԻՆ ԲԱՐԸ ՄԻՅԴ ՇԵՆՔԻՆ

ՕԳՈՍՏՈՍԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՆՔՆԵՐԻ ՀԱՅՎԱԿԱՆ

ԴՊՐՈՑԻ ՇԵՆՔԻ ՆՈՐ ՆԿԻՐԱՏՈՒՆԵՐՆ ԵՆ՝

- 1. Առաքելյան Նվարդ, Լոռու մարզ, ք. Վանաձոր (4 քար՝ 1.000 դրամ)
2. Սկրտչյան Նվարդ (9 քար՝ 2.250 դրամ)
3. Արմավյան Լիանա, Լոռու մարզ, ք. Վանաձոր (2 քար՝ 500 դրամ)
4. Վանաձորի քաղաքապետարան (1.200 քար՝ 300.000 դրամ)

Միջոց շենքի կառուցման նպատակով դրամահավաքին մասնակցություն է ունեցել 687 մարդ 10 մարզերից՝ ներդրելով 2.912.890 դրամ գումար:

ՀՄԻԿ նախագահության, աշխատակազմի և շահառուների անունից շնորհակալություն ենք հայտնում բոլոր նվիրատուներին Մարդու իրավունքների կրթության զարգացմանը նպաստելու համար:

Միջոց շենքի կառուցման համար անհրաժեշտ է 440.880.000 դրամ կամ 1.763.520 քար:

ՆԿԻՐԱԲԵՐՎԵԼ Է 11.652 քար

ՄԱՑԵԼ Է 1.751.868 քար



Փոխանցումները կարելի է կատարել հետևյալ բանկային հաշվեհամարին. 001-093392-001 (հայկական դրամ) Էյ-Էս-Բի-Սի (HSBC) բանկ - Հայաստան ստացող՝ Հայկական սահմանադրական իրավապաշտպան կենտրոն նպատակ՝ «Միջոց շենքի համար»:

Տեղեկությունների համար զանգահարել (0322) 22967 կամ 44781 հեռախոսահամարներով:

ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ ԲՈՒՈՐԻՍ ՆԱՄԱՐ

Մարդու իրավունքների և հավասար հնարավորությունների հանձնաժողովը կազմակերպում է լուսանկարչական մրցույթ՝ «Արժանապատվություն և արդարություն բոլորիս համար» խորագրով՝ նվիրված Մարդու իրավունքների հանձնաժողովի հռչակագրի ընդունման 60-ամյակին:

Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել մրցութային թեմային համապատասխան լուսանկարներ, որոնք նորովի մոտեցում կցուցաբերեն մարդու իրավունքների թեմային: Նկարները կարող են արտացոլել նաև արժանապատվության և արդարության հաստատման որևէ դրվագ:

Մրցույթին մասնակցելու համար տարիքային սահմանափակումներ չկան: Նախատեսվում է մեծ մրցանակ: Դիմել կարող եք մինչև 2008 թ. հոկտեմբերի 31-ը: Մրցույթի մասնակցության դիմելաձևը, ինչպես նաև լրացուցիչ տեղեկություններ կարող եք գտնել հետևյալ կայքում՝

http://www.humanrights.gov.au/photo\_comp/index.html:

ՆՈՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆՈՒՄ

Մարդու իրավունքների պանթեոնում ստացվել է միջազգային հաստատված և կոմիտեի կողմից հրատարակվող՝ նախկինում «Հեյսինկյան դիտակ» վերնագիրը կրող «Անվտանգություն և մարդու իրավունքներ» (Security and human rights) ամսագրի հերթական 19-րդ համարը, որը նվիրված է Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) աշխատանքին և նպատակ ունի կառուցել անվտանգություն՝ համագործակցության միջոցով, ինչպես նաև խթանել մարդու իրավունքների պաշտպանությունն ամբողջ աշխարհում:

Ամսագրում արծարծվող հիմնական թեմաներից են հակամարտությունների կանխարգելումը, մարդու իրավունքները, փոքրամասնությունները, ժողովրդավարության զարգացումը և համագործակցային անվտանգությունը: Համարում տեղ են գտել Ռուսաստանին և ԵԱՀԿ-ին, Կոսովոյի անկախության հռչակագրի, ազգային փոքրամասնությունների չափանիշներին և այլ թեմաների վերաբերող ուշագրավ հոդվածներ:



ԵՐԵՎԱՆՈՒՄ ԿԿԱՌՈՒՑՎԵՆ ՏԱՍՆՅԱԿ ԱՏՈՐԳԵՆՆՅԱ ԱՎՏՈՅԱՆԳՐՎԱՆՆԵՐ



Երևանի Ազատության հրապարակում Հ. Թումանյանի և Ա. Սպենդիարյանի արձանների շրջակայքում կատարվող աշխատանքների առնչությամբ Երևանի գլխավոր ճարտարապետ Ս. Դանիելյանը տեղեկացրել է, որ նախատեսվում է մայրաքաղաքի մի շարք տարածքներում կառուցել ստորգետնյա ավտոկայանատեղեր փողոցների երթևեկի մասերը կայանվող տրանսպորտային միջոցներից բեռնաթափելու նպատակով: Ծրագրվում է Կենտրոն համայնքում կառուցել շուրջ երկու տասնյակ բազմահարկ ստորգետնյա ավտոհանգրվաններ՝ հազեցած ժամանակակից տեխնիկական և սպասարկման միջոցներով:

Արձանները կկազմաբանվեն և աշխատանքների ավարտից հետո կվերականգնվեն նույն տեսքով: «Վերգետնյա հատվածի աշխատանքները նախատեսվում է ավարտել տարածքը բերելով նախկին տեսքի, մեկ տարվա ընթացքում, իսկ ստորգետնյա մասի աշխատանքները՝ ամբողջ տեխնիկական կախվածությամբ, մինչև 2010 թ. մարտ ամիսը»,- նշված է Երևանի գլխավոր ճարտարապետի՝ Էկոլոգիական հասարակական դաշինքի անդամ Ի. Կարապետյանին ուղղված նամակում:

Այժմ ծրագիրը հանգամանորեն մշակվում և քննարկվում է:

2008 թ. սեպտեմբերին ստորգետնյա ավտոհանգրվանի կառուցման աշխատանքներ են սկսվելու Ազատության հրապարակում. այդ ընթացքում Հ. Թումանյանի և Ա. Սպենդիարյանի

ՄՐՑՈՒՅԹ ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԵՎ ԱՄՊԻՐԱՆՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը հայտարարում է մրցույթ 2008-2009 ուսումնական տարում Միջին և Արևելյան Հանրապետության ուսումնական հաստատություններում մագիստրոսական և ասպիրանտական կրթություն ստանալու համար (8 կրթաթաղան): Մրցույթին կարող են մասնակցել համապատասխանաբար բակալավրի և մագիստրոսի կրթական աստիճան ունեցող ՀՀ քաղաքացիները: Արաբերեն լեզվի իմացությունը պարտադիր է:

Ասպիրանտական կրթության համար դիմորդները պետք է ներկայացնեն նաև ռեֆերատ հայերենով (նվազագույնը 20 էջ), տեղեկանք ինֆորմատիկայի ստուգարքի հանձնման վերաբերյալ, ինչպես նաև օտար լեզվի քննության հավաստագիր (TOEFL): Ասպիրանտական կրթության համար հավակնող դիմորդները պետք է հանձնեն մասնագիտական քննություն ՀՀ կրթության և գիտության նախարարի 2006 թ. սեպտեմբերի 15-ի N740-Ն հրամանով հաստատված՝ Հայաստանի Հանրապետությունում ասպիրանտուրայի ընդունելության կարգի համաձայն և անցնեն հարցազրույցի փուլ:

Փաստաթղթերը ներկայացնել ՀՀ կրթության և գիտության նախարարության միջազգային համագործակցության և սփյուռքի վարչություն (ք. Երևան, Կառավարության 3 շենք, 6-րդ հարկ, 619 սենյակ, հեռ. 56-23-64, 52-52-07): Փաստաթղթերի ընդունման վերջնաժամկետն է՝ 30.09.08 թ. (ներառյալ): Մրցույթը տեղի կունենա ս.թ. հոկտեմբերի 3-6-ը ընկած ժամանակահատվածում՝ Երևանի Խաչիկ Դաշտենցի անվան թիվ 114 միջնակարգ դպրոցում (Հանրապետության 73):

- Կրթաթաղաններին հավակնող դիմորդները պետք է ներկայացնեն.
- դիմում մրցույթին մասնակցելու համար, որում պետք է նշվի նախընտրած մասնագիտությունը.
- դիմում-հարցաթերթիկ.
- ավարտական դիպլոմի և միջոցի պատճենները՝ անգլերեն թարգմանված և նոտարական կարգով վավերացված.
- անձնագրի պատճենը.
- բժշկի տեղեկանք՝ արտերկր գործուղվողների համար.
- 3/4 չափի 2 գունավոր լուսանկար.
- արական սեռի անձինք՝ զինգրքայի պատճենը կամ դրան փոխարինող ժամանակավոր կամ զորամասային տեղամասից համապատասխան տեղեկանք:

Մրցույթը հրատարակվում է Եվրոպական հանձնաժողովի ֆինանսական օժանդակությամբ: Բովանդակության համար պատասխանատվությունը կրում է միայն Հայկական սահմանադրական իրավապաշտպան կենտրոնը: Թերթը ոչ մի դեպքում չի կարող դիտվել որպես Եվրոպական հանձնաժողովի դիրքորոշումն արտացոլող փաստաթուղթ:

Թերթը հրատարակվում է Եվրոպական հանձնաժողովի ֆինանսական օժանդակությամբ: Բովանդակության համար պատասխանատվությունը կրում է միայն Հայկական սահմանադրական իրավապաշտպան կենտրոնը: Թերթը ոչ մի դեպքում չի կարող դիտվել որպես Եվրոպական հանձնաժողովի դիրքորոշումն արտացոլող փաստաթուղթ:

Հրատարակության Դ տարի
Հիմնադիր և իրատարակիչ
Հայկական սահմանադրական իրավապաշտպան կենտրոն
ՀՀ, 2003, ք. Վանաձոր, Շիրակացու 1-ին նրք., թիվ 2
Հեռ.՝ +374 (322) 2-29-67
Հեռապատճեն՝ +374 (322) 4-47-81
Էլ. փոստ՝ acrpc@acrpc.am, lc@acrpc.am
Կայքէջ՝ www.acrpc.am

Գլխավոր խմբագիր՝ Գևորգ ԱՆՆՈՒԿՅԱՆ
Խմբագիր՝ Հերմինե ԲԱՐՈՒՅԱՆ
Համակարգչային ձևավորումը՝ Արմեն ՕՍԻՊՈՎԻ
Թղթակցությունները չեն գրախոսվում և հեղինակներին չեն վերադարձվում:
Մեջբերումներ անելիս կամ արտատպելիս հղումը «Իրավական մշակույթին» պարտադիր է:
Հրատարակումների թվանոթակությունը կարող է չհամապատասխանել խմբագրության կարծիքին:

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Ստորագրված է տպագրության 2008 թ. 08.29:
Տպաքանակը՝ 2000:
Տպագրվել է «ՄԻՄ տպագրատուն» ՍՊԸ-ում:
Իրավական մշակույթ
Legal Culture
Правовая культура
ՏԱՐԱԾՎՈՒՄ Ե ԱՆՎՃԱՐ